891.99
Ra-71

Yukichi Fukuzawa

Kunji Higuchi-shita

31

ՆՈՐ ԲՅՈՒԶԱՆԴԻՈՆ

891.99
Թ-71

19 NOV 2011

ԷԱ.99
Թ-71 ԱՄ

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑ

ՆՈՐ ԲՅՈՒԶԱՆԴԻՈՆ

(ԴՐԱՄԱ)



1925
ԵՐԵՎԱՆ

ԷԱ 1353

22.04.2013

31388

Հեմագրության բոլոր իրավունքները
վերապահված են հեղինակին

Դրատեպված № 158 ը. Տիրաժ 1200

Պետրատի առաջին տպարան Վաղարշապատում

ԽԱՂԻՆ ԱՆՁԵՐԸ

1. ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ (ամիրա)
2. ԻՍԽԵԼ (սեղանավոր)
3. ՀԱԼԵՏ (վաճառական)
4. ՊՈՂՈՍ (ամիրա)
5. ՏԻԳՐԱՆ (ամիրա)
6. ՍՈՒԼԹԱՆ
7. ՄԵԾ ՎԵԶԻՐ
8. ՆԱԶԻՐ
9. ԱՐԱՐՈՂԱՊԵՏ
10. ՇԵՅԽ-ԻԻԼ-ԻՍԼԱՄ
11. ՍԵՆԵԿԱՊԵՏ
12. ԹԱՐԳՄԱՆ
13. ՄՈՒՆԵՏԻԿ
14. ՀԱՆԴԵՐՁԱՊԵՏ
15. ՄԱԲՍԱՏԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՁ
16. ԴԱՀՃԱՊԵՏ
17. ՄԱՅՐԸ
18. ՀԱՐՍԸ
19. ՍԸՐՄԱ (Հաջի Զելեբու կինը)
20. ՆԱԶՄԻԵ » » »
21. ՍԻՐԱՆՈՒՇ (Հաջի Զելեբու դուստրը)
22. ՍԻՄԽԱ (Իսխելը կինը)
23. ՁԻԼՖԱ (Իսխելի դուստրը)
24. ՊԱՌԱՎ ԴԱՅԱԿ
25. ՀԱԿՈԲ (Հաջի Զելեբու տան գլխավոր սպասավորը)
26. ՀԱՐՃԸ.

Բեռնակիրներ, սպասավորներ, սպասուհիներ, ներքինիներ, վաճառականներ և պալատականներ։

Ժամանակը՝ 1819 թ. Կ. Պոլսում։

ՆՈՐ ԲՅՈՒԶԱՆԴԻՈՆ

I ՊԱՏԿԵՐ

Տյուզան ամիրաների վոսբորահայաց ապարանքի դահլիճը, կահավորված նոր բյուզանդական վոճով: Վարագույրը բացվելիս յերկու ծառա դահլիճում զբաղված են մաքրությամբ:

Ա. ԾԱՌԱ.

Սարսափելի յե յեղելությունը։ Յերկու որվա մեջ Տյուզյան ամիրաներից վոչ վոք չմնաց։

Բ. ԾԱՌԱ.

Առաջին անգամ չե, վոր Ոսմանյան մայրաքաղաքը ականատես ե լինում այսպիսի յեղեռնագործությունների։

Ա. ԾԱՌԱ.

Ավերվեց Տյուզյանների այս շքեղ ապարանքը։ Կանայք չեն կարող կանգուն պահել այն։ Նահատակների թաղումը յերբ ե կատարվելու։

Բ. ԾԱՌԱ.

Յերեկ գիշեր Վոսբորի ձկները խնջույք սարքեցին մեր ամիրաների դիակներով։

Ա. ԾԱՌԱ.

Արդյոք կմնանք մենք այս ապարանքում ամիրաների նահատակությունից հետո։

Բ. ԾԱՌԱ.

Ցերևի՝ վոչ։

Ա. ԾԱՌԱ.

Յեթե չենք մնալու, գլխներիս ճարը տեսնենք։ Այսքան տարի այստեղ գերություն արինք և մի արծաթ չունենք մեր գրպանում։

Բ. ԾԱՌԱ.

Ի՞նչ անենք։

Ա. ԾԱՌԱ.

Պետք է մտածել։

(Մտնում են Մայրը, Հաջի Զելեբի, Տիգրան յեվ Պողոս ամիրաները։ Յերկու ամիրաները բռնած են Մոր թեվերից։ Մայրը լաց է լինում)։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Այսոր, մեծ տիկին, լացից առաջ մենք պարտական ենք մտածել մի ուրիշ բանի մասին։

ՄԱՅՐԸ.

Ի՞նչ բան, ամիրա։ Մի՞թե ավելի կարևոր բան կա ինձ անելու, քան խորախոր սուգը։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Տյուզյանների տան պատիվը, մեծ տիկին, ահա մեծ բանը։ Սպանությունը, վոճիրը չեն աղարտի ընտանեկան պատիվը, բայց յեթե խայտառակ ձևով ծախեն այս տան կահկարասիները... ահա մեծ, ահավոր բանը։

ՄԱՅՐԸ.

Այդ յեղեռնագործությունից հետո կարող են կրակի տալ Տյուզյանների վողջ ապարանքը։ Իմ վորդիների գլխատումից հետո հարկավոր չեն վոչ ապարանք, վոչ ադամանդ։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Հարգում եմ ձեր վիշտը, մեծ տիկին, զգում եմ ցավի թույնը, վոր սողոսկում է ձեր մայրական սիրտը, բայց կա մի ուրիշ մեծ բան, մեծ տիկին. վողջ մի սերունդի գոյության հարցն է դրված մեր առաջ։ Պետք է փրկել այդ սերունդի հավատը. փրկելու համար սերունդը։

ՄԱՅՐԸ.

Փրկեցեք, ինչպես վոր կամենում եք, ամիրա։

ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐԱ.

Մեր տոքաբախտ ամիրաները իրենց գլխատումից առաջ, հավատում եմ, մտածեցին իրենց կրոնի փրկության համար։

ՊՈՂՈՍ ԱՄԻՐԱ.

Պետք է անցնել գործի անմիջապես, վորովհետև արդեն մոտ է ժամանակը։ Շուտով այստեղ կլցվեն անհավատները։

ՄԱՅՐԸ.

Արեք, ինչպես հարմար եք դատում։ Ինձ մի՛այն մնում է արցունք թափել և աղոթել։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Սպասում ենք ձեզանից, մեծ տիկին, ձեր հասակի վայել քաջասրտություն։ Խոնարհվում եմ ձեր սպիտակ մազերի առաջ։ Ներեցեք ինձ։

ՄԱՅՐԸ.

Ամեն ինչ կորած է, ամիրա, բայց որհնված կլինեք, յեթե... յեթե կարողանաք փրկել մեր հավատքը։ (Սպասելով յեվ մնալով անպատասխան) Ինչի՞ մասին եք մտածում, ամիրա։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Մատուռի մասին, մեծ տիկին։ Անհրաժեշտ է, վոր մատուռի գոյությունը գաղտնի պահվի։ Մատուռի բացվելը նշանակում է վնասել Ոսմանյան կայսրության սահմաններում ապրող հայ կաթոլիկության։

ՄԱՅՐԸ.

Ի՞նչ եք մտածում անել։

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ.

Մեծ պահարաններից մեկը պետք է բերել և դնել այս մատուռի դռան առաջ՝ դերծ պահելու համար նշմարվելուց։

ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐԱ.

Առանց այդ էլ մատուռի դուռը աննշմարելի է, ամիրա։

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ.

(Քննում է դուռը՝ բաց անելով յեվ փակելով։ Մատուռը զետեղված է դահլիճի խորքում փոքրիկ, պատի հետ նույնացած, դռնով, բայց ամբողջ պատը բաժանվում է յերկու մասի յեվ աջ ու ձախ կողմերի վրա բացվելով՝ փոքրիկ մատուռը կազմում է դահլիճի շարունակական մասը)։

Այնուամենայնիվ անհրաժեշտ է զգույշ լինել։ Ոսմանյան կայսրության ամենախիստ օրենքներից մեկն է կաթոլիկ պաշտամունքի արգելումը։ Իսկ մենք այս մատուռում արած գաղտնի պաշտամունքով գործել ենք կայսրության օրենքի և կրոնի դեմ։

ՊՈՂՈՍ ԱՄԻՐԱ.

Անհրաժեշտ է անել այդ անմիջապես։ (Դուրս)։

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ.

Ցեսս խոսել եմ մի հայ վաճառականի, վոր անպայման նա գնի այդ պահարանը և թողնի իր տեղում։

ՄԱՅՐԸ.

Ատում եմ կենդանի մարդկանց։ Ներեցեք ինձ, ամիրա, խոսում եմ հոգու խորքից։

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ.

Հասկանում եմ ձեզ, մեծ տիկին, արդար է ձեր ատելությունը։ Մարդկային է սերը, մարդկային է և ատելությունը։

ՄԱՅՐԸ.

Ցեսս կարծում եյի, վոր յերեկվա վոճիրներից հետո պետք է ամեն ինչ շարժվեր, պետք է ամեն ինչ փուլ գար։

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ.

Դեռևս ժամանակ կա, մեծ տիկին։

ՄԱՅՐԸ.

Լռում են, յերբ դեռ դիակները տաք են և արյունը պըղպըջում է։ Միթե ամեն ինչ սառելուց հետո պիտի շարժվի։ Ժամանակը կուլ է տվել սրանից ավելի խոշոր վոճիրներ։

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ.

Ցեթե սրանից ավելի խոշոր վոճիրները կուլ են գնացել ժամանակի անդունդում, ինչու...

ՄԱՅՐԸ.

Ձեր գործին նայեցեք, ամիրա։ Վիշտը ժոլորեցնում է ինձ։ Միայն խնդրում եմ թույլ չտալ, վոր ամբարիշտ Իսխել հրեան գնի Տյուզյանների կահկարասիները։

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ.

Անխուսափելի է դա։ Իսխելը հարուստ է և վոխերիմ թշնամի նահատակներին։ Նրանց գլխատումը դավադրելուց հետո՝ անպայման կգնի և նրանց կարասիները։

ՄԱՅՐԸ.

(Հառաչում է)։

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ.

Կարգադրել եմ, վոր մեր բարեկամները գնեն ձեզ համար հարգելի և հիշատակելի իրեղենները։

ՄԱՅՐԸ.

Ինչքան ծանր են այս բոլորը մոր համար։

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ.

Զգում եմ իրրև հայր, մեծ տիկին։

ՊՈՂՈՍ ԱՄԻՐԱ.

(Ներս) Բերում են պահարանը։ (Ցերկու ծառաները բերում են մեծ պահարանը յեվ դնում են մատուռի դռան առաջ յեվ գնում են դուրս)։

ՀԱՋԻ ՉԵԼԵԲԻ.

Այսպես լավ է։ (Լռություն) Պիտի լինել սառնարյուն և քաջասիրտ։

ՀԱՐՍԸ.

(Սեվեր հագած յեվ արցունքոտ աչքերով մտնում է յեվ չոքելով սկեսուրի առաջ՝) Մայր։

ՄԱՅՐԸ.

Վոչ վոքի այնքան իրավունք չի տրվել արցունք թափելու, վորքան քեզ, աղջիկս։ Բայց հավատա Աստուծո վրեժխնդրության։

ՀԱՐՍԸ.

Սուտ է, մայր, ամեն ինչ սուտ է, և Աստված, և նրա պատվիրանները։ Այսպիսի վոճիր։ Ոսմանյան կայսրությունը չի ունեցել նման հավատարիմ ծառաներ, ինչպես իմ ամուսինը և տագրերը։ Գլխատեցին նրանց։

ՀԱՋԻ ՉԵԼԵԲԻ.

Ոսմանյան կայսրությունը ինքը խորտակեց իր ամենահզոր սյուները։ Հավատացեք Աստուծո արդարության, աղջիկս։

ՀԱՐՍԸ.

Ցերբեք, յերբեք։

ՀԱՋԻ ՉԵԼԵԲԻ.

Ձեր չհավատալուն համար Աստված կարող է հրաշքներ գործել։

ՀԱՐՍԸ.

(Լալիս է) Մենք հրաշք չենք տեսնի, ամիրա։

ՍՊԱՍԱՎՈՐ.

(Ներս մտնելով) Ոսմանյան արքունիքի արարողապետը, սենեկապետը, թարգմանը և նազիրներ։

(Ընդհանուր սարսափ և անցնում նեղկաների վրայից)։

ՄԱՅՐԸ.

Գնանք, աղջիկս, և աղոթենք սուրբ կույս Մարիամին։

(Գնում են դահլիճի աջ դռնով։ Հաջի Չելեբի, Պողոս ամիրա յեվ Տիգրան ամիրա աճապարում են ընդունել նրանց։ Ներս են մտնում Արարողապետ, Սենեկապետ, Թարգման յեվ յերկու պալատական։ Ամիրաները թրքական խորը բարեվով ընդունում են նրանց)։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Տյուզյաններից վոչ վոք չկա այստեղ մեզ ընդունելու, Հաջի Չելեբի։ Պատերազմն պետք է կարդանք սուլթանական ֆերմանը։

ՀԱՋԻ ՉԵԼԵԲԻ.

Աստուծո կամքով՝ և կամքով մեր փառապանծ արքայի Տյուզյաններից վոչ մի տղամարդ այլևս չի կարող լսել սուլթանական ֆերմանը։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

(Հեգնական ծիծաղում է)։

ՀԱՋԻ ՉԵԼԵԲԻ.

Նրանք իրենց գլուխներով քավեցին իրենց մեղքերը, տեր իմ։ Տյուզյանների ապարանքում միայն կանայք կան և կանայք իմացել են ֆերմանի բովանդակությունը։ Գոհ են արքայական կարգադրությունից։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Դուք նշանակված եք նրանց գործերի փոխանորդ, այնպես չե՞։

ՀԱՋԻ ՉԵԼԵԲԻ.

Ներեցեք, տեր իմ, մենք այստեղ գործադրելու յենք

Արքունիքի հրամանները միայն... (Ներս են մտնում Հալետ եֆենդի, Իսխել յեվ զանազան ազգերի միքանի վաճառականներ)։ Մենք սպասավորներ ենք Օսմանյան կայսրության շահին և փառքին։ (Զելերու աչքերը հանդիպում են Իսխելին յեվ Հալետին)։ Սպասավորությունը կայանում է նրանում, վոր հաջողենք ավելացնել նրա շահերը և փառքը։ Մենք այս իմաստով ծառայել ենք, ինչպես և Տյուզյանները ծառայեցին այդպես... (Պաշտոնատարներից անախորժ արտահայտություն, Զելերին անմիջապես շարունակում է) մինչև իրենց սայթաքումը և անկումը։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Դուք անզիր եք արել ձեր ճառը, Հաջի Զելեբի։

ԻՍԽԵԼ.

(Մեղմ շնական ծիծաղ)։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

(Խստիվ աչքերը չռելով Իսխելի վրա) Մենք շատ ենք յեփված, տեր իմ, պետական ծառայության դժվարին գործերում։ Մեկ որից մյուսը կարելի չե սովորել պետական գործը։ Կայսրությունը թեև հիմնված է նորին վեհափառության, մեր ոգոստափառ արքայի ուսերի վրա, բայց նրա ծանր բեռը թեթևացնում են կայսրության հավատարիմ ծառաները։

ՀԱԼԵՏ.

Իսկ վոչ-հավատարիմ ծառաները կպատժվեն Տյուզյանների նման։

ԻՍԽԵԼ.

(Ուրախության արտահայտություն)։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Այո։ Պետք է պատժվեն անհավատարիմները, բայց մարդիկ կան, վորոնք կայսրության այնքան մեծ ծառայություններ են մատուցել, վոր նրանց բոլոր մեղքերը

միասին կշռած ավելի թեթև են, քան ուրիշների ծառայությունները։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

(Թարգմանին) Կարդացեք սուլթանական ֆերմանը։

ԹԱՐԳՄԱՆ.

(Առաջ գալով յեվ բանալով կանաչ ժապավենով կապված հրովարտակը՝ կարդում է)։ Սուլթան և վորդի սուլթանների, սուլթան խանը դազի, հաջորդ փառավոր մարգարեյի, թագավոր յերկու աշխարհաց, ստվեր աստուծո ի վերա յերկրի, ոգոստափառ կայսր և խալիֆա հրամայում է, վոր այս ֆերմանս ձեզ հասնելուն հայտնի լինի, վոր արքունի փողերանոցիդ պետ Տյուզյանների զեղծարարության պատճառով գլխատումից հետո՝ աճուրդի յեն հանվում նրանց վոչ կահկարասիքը։ Աճուրդը տեղի պիտի ունենա 24 ժամվա ընթացքում Տյուզյանների ապարանքում։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Կանչեցեք մունետիկը։

ՍԵՆԵԿԱՊԵՏ.

Պատրաստ է, տեր իմ։

(Մտնում է մունետիկը)։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Աճուրդի դիր ապարանքում գտնված կահկարասիները, բացի ընտանիքի անձնական իրերից։

ՄՈՒՆԵՏԻԿ.

Պատրաստ եմ, տեր իմ։ Աճուրդի յե դրվում այս մարմարյա մեծ սեղանը իր ամբողջ կարդ ու սարքով։

ԻՍԽԵԼ.

1 վոսկի։

ՄՈՒՆԵՏԻԿ.

1 վոսկի։

ՄԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ.
2 վոսկի։
ԻՍԽԵԼ.
5 վոսկի։
ՄՈՒՆԵՏԻԿ.
5 վոսկի... (Լռություն) 5 վոսկի։ (Լռություն) Ծախված է։ Աթոռները և բազկաթոռները։
ԻՍԽԵԼ.
10 վոսկի։ (Լռություն) 10 վոսկի։ Ավելացնող չկա։ (Լռություն) Տասը վոսկի։ (Լռություն) Ծախված է։ Վարագույրները։
ՄԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ.
3 վոսկի։
ՄՈՒՆԵՏԻԿ.
3 վոսկի։
ՄԻ ՀՐԵԱ.
4 վոսկի։
ՄՈՒՆԵՏԻԿ.
4 վոսկի։
ՄԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ.
10 վոսկի։
ՄՈՒՆԵՏԻԿ.
(Վոգեվորված) 10 վոսկի։
ՄԻ ՀՐԵԱ.
(Ապշած) 11 վոսկի։
ՄՈՒՆԵՏԻԿ.
11 վոսկի։ (Լռություն) 11 վոսկի։
ՄԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ.
15 վոսկի։
ՄՈՒՆԵՏԻԿ.
15 վոսկի։ (Լռություն):

ՄԻ ՀՐԵԱ.
(Քաշվում է մի կողմ)։
ՄՈՒՆԵՏԻԿ.
15 վոսկի։ (Լռություն) Ծախված է։ (Մոտենալով պահարանին)։ Պահարանը։
(Բոլոր ամիրաները ղժզոնում են, միայն Հաջի Չելեբին սառնարյուն է)։
ՄԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ.
1 վոսկի։
ՄՈՒՆԵՏԻԿ.
1 վոսկի։
ԻՍԽԵԼ.
15 վոսկի։
ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.
(Աչքերը չռում է Իսխելի վրա)։
ՄՈՒՆԵՏԻԿ.
15 վոսկի։ 15 վոսկի։
(Իսխելը յեվ Հալետը փափսում են)։
ՄԻ ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆ.
20 վոսկի։
ՄՈՒՆԵՏԻԿ.
20 վոսկի։
ՀԱՋԻ ՉԵԼԵԲԻ.
(Տեղը փոխելով նստում է մի ուրիշ տեղ յեվ սկսում է սառնարյուն միրուքը շփել)։
ԻՍԽԵԼ.
50 վոսկի։
ՄՈՒՆԵՏԻԿ.
50 վոսկի։
ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ.
51 վոսկի։

ՄՈՒՆԵՏԻԿ.

51 վոսկի։

ԻՍԽԵԼ.

70 վոսկի։

ՄՈՒՆԵՏԻԿ.

70 վոսկի։ (Լռություն) 70 վոսկի։ (Լռություն) Վերջին անգամ—70 վոսկի։ (Լռություն) Վերջին անգամն է։

ՀԱՋԻ ՉԵԼԵԲԻ.

Սա շատ հին պահարան է։ Տալիս եմ 100 վոսկի։

ՄՈՒՆԵՏԻԿ.

(Վոգեվորված) 100 վոսկի։

ԻՍԽԵԼ.

200 վոսկի։

ՄՈՒՆԵՏԻԿ.

200 վոսկի։ (Լռություն) 200 վոսկի։ (Լռություն) Վերջին անգամ—200 վոսկի։ (Լռություն) Ծախված է։

ԻՍԽԵԼ.

(Անցնելով Հաջի Չելեբու առաջից, կծու քմծիծաղով մոտենում է պահարանին յեվ տնտղում յեվ ապա գնում է դուրս)։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Մի՞թե այդքան արժեքավոր եր այդ պահարանը, Հալետ եֆենդի։

ՀԱԼԵՏ.

Ապրանքների լավագույնը հրեաներն են ճանաչում, տեր իմ։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Յերևի դա հնություն է։

ԻՍԽԵԼ.

(Մտնում է յերկու ընկերների հետ միասին) Տարեք այս պահարանը իմ տունը։ (Բեռնակիրները սկսում են տանել)։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Ի՞նչպես իմացար, Իսխել, որ այդ պահարանը այդքան արժեքավոր է։

ԻՍԽԵԼ.

(Խոնարհվելով) Վաղուց եյի տեսել այդ պահարանը (դառնալով Հաջի Չելեբուն) յերջանկահիշատակ Տյուզյանների ապարանքում, տեր իմ։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Յեվ սպասում եյիր այս բոպեյին. այնպես չէ։

ԻՍԽԵԼ.

Բայց, ավաղ, կայսրության ՀԱՍԵԼու այս դժբախտ պարագաների հետո։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Շարունակիր, մունետիկ, շուտ վերջացրու։

ՄՈՒՆԵՏԻԿ.

Ջահը։

ՀԱԼԵՏ.

50 վոսկի։

ՄՈՒՆԵՏԻԿ.

50 վոսկի։ (Լռություն) 50 վոսկի։ (Լռություն)։

ԻՍԽԵԼ.

(Պահարանը տարվելուց հետո՝ պահարանի դրված տեղի պատի վրա փնտռտուքներ է անում)։

ՄՈՒՆԵՏԻԿ.

Վերջին անգամ—50 վոսկի։ (Լռություն) Ծախված է։

ՀԱՋԻ ՉԵԼԵԲԻ.

(Դուրս)։

ՄՈՒՆԵՏԻԿ.

Արևելյան գորգերը։

ՄԻ ՀՐԵԱ.

2000 վոսկի։

69
1001
1569

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԳԱՐԱՆ
Ս.Հ.Հ. Ազգային Գրադարան
1921—1922
Ա ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀԱՋԻ ՉԵԼԵԲԻ.

(Ներս է գալիս մի փոքրիկ տուփով)։

ՄՈՒՆԵՏԻԿ.

2000 վոսկի։ (Լռություն) 2000 վոսկի։ (Լռություն) Ծախված է։

ՄԻ ՀՐԵԱ.

(Աժան գնելու համար ձեռքերն և շփշփում)։

ՀԱՋԻ ՉԵԼԵԲԻ.

(Տուփը դնելով սեղանի վրա) Սա ամենից արժեքավորն է Տյուզյանների ապարանքում։

ԻՍԽԵԼ.

(Առանց ուշադրություն դարձնելու Հաջի Չելեբու խոսքերին՝ պատի վրա փնտռտուքները շարունակում է)։

ՀԱՋԻ ՉԵԼԵԲԻ.

Ադամանդներ և զանազան գոհարեղեններ են ծախվում, Իսխել եֆենդի, չեք կարող անտարբեր լինել։

ԻՍԽԵԼ.

Ցես հնարավորություն չունեմ մտածելու իմ ունեցած ադամանդների և գոհարեղենների մասին։ Ձեմ ցանկանում։

ՀԱՋԻ ՉԵԼԵԲԻ.

Հա, հա, հա, զարմացնում եք, ապշեցնում եք դուք ինձ։

ԻՍԽԵԼ.

Կարող է պատահել։

ՄՈՒՆԵՏԻԿ.

(Խոշոր մարգարիտների մի շարան, որոնց մեջտեղում փայլում են ադամանդներ յեվ սուտակներ, ոնում յեվ բարձրացնում է վերը) Ահավասիկ։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

(Ձեռքը յերկարում է)։

ՄՈՒՆԵՏԻԿ.

(Հանձնում է շարանը Արարողապետին)։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Ի՞նչ հարստություններ յեն տիրացել Օսմանյան կայսրության հավատարիմ ծառաները։

ՍԵՆԵԿԱՊԵՏ.

Արդար միջոցներով այսքան հարստություն...

ՀԱՋԻ ՉԵԼԵԲԻ.

Միայն արդարությունն է վարձատրվում, տեր իմ։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Ուրեմն դուք կարծում եք, որ Տյուզյանները արդար եյին։

ՀԱՋԻ ՉԵԼԵԲԻ.

Յեթե անարդար եյին, նրանք քավեցին այն իրենց արյունով, իսկ յեթե պատմությունը ցույց տա, որ արդար եյին...

ՀԱԼԵՏ.

Օսմանցիների սուլթանը անարդար չի կարող լինել։

ԻՍԽԵԼ.

(Մոտենալով) Արդար է մարգարեյի հաջորդը։

ՀԱՋԻ ՉԵԼԵԲԻ.

Արդար է մարգարեյի հաջորդը, բայց նրա լսողությունն ու տեսողությունը կախված են ուրիշներից։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Հաջի Չելեբի, ինչպես յերևում է, դուք ցանկանում եք մարտիրոս դառնալ։

ՀԱՋԻ ՉԵԼԵԲԻ.

Մենք բոլորս ել զոհաբերության համար ենք ապրում։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Ծախիր այս հրաշալի շարոցը, մունետիկ։

ՄՈՒՆԵՏԻԿ.

(Առնելով շարոցը՝ վեր և քարձրացնում յեվ լույսի տակ խաղեր և անում) Մարգարիտների, ադամանդների և սուտակների մի շարոց։ (Լռություն)։

ԻՍԽԵԼ.

(Ելի մոտենում և մատուռի դռան)։

ՄՈՒՆԵՏԻԿ.

Մարգարիտների, ադամանդների և սուտակների շարոց։

ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐԱ.

25,000 վոսկի։

ՄՈՒՆԵՏԻԿ.

25,000 վոսկի։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Վերջապես խզվեց ձեր լռությունը, Տիգրան ամիրա։

ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐԱ.

(Խոնարհվելով) Լսում եյի, տեր իմ։

ՄՈՒՆԵՏԻԿ.

25,000 վոսկի։

ՀԱԼԵՏ.

30,000 վոսկի։

ՄՈՒՆԵՏԻԿ.

30,000 վոսկի։

ՊՈՂՈՍ ԱՄԻՐԱ.

40,000 վոսկի։ (Վոտի կանգնելով յեվ խոնարհվելով Արարողապետի առաջ) Ներեցեք, տեր իմ։

ԻՍԽԵԼ.

(Մոտենալով մունետիկին յեվ շարոցը տնտղելով) Ցերը Պողոս ամիրան ցանկանում է մի բան գնել, միայն ձկնորսները կարող են չհասկանալ նրա արժեքը։ 50,000 վոսկի։

ՄՈՒՆԵՏԻԿ.

50,000 վոսկի։ 50,000 վոսկի։ (Լռություն)։

ԻՍԽԵԼ.

(Մոտենում է դեպի մատուռի դուռը)։

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ.

(Ցետ քերելու համար) 60,000 վոսկի։

ԻՍԽԵԼ.

(Անմիջապես յետ է գալիս, ելի տնտղում է շարոցը)։

ՄՈՒՆԵՏԻԿ.

60,000 վոսկի։

ԻՍԽԵԼ.

(Հաջի Չելեբու վրա չոելով աչքերը յեվ հեգնական քմծիծաղով) 75,000 վոսկի։

ՄՈՒՆԵՏԻԿ.

75,000 վոսկի։

ԻՍԽԵԼ.

(Մոտենում է դեպի մատուռը)։

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ.

80,000 վոսկի։

ՄՈՒՆԵՏԻԿ.

80,000 վոսկի։

ԻՍԽԵԼ.

(Առանց յետ դառնալու) 100,000 վոսկի։

ՄՈՒՆԵՏԻԿ.

100,000 վոսկի։ (Լռություն) 100,000 վոսկի։ (Լռություն) 100,000 վոսկի։ (Լռություն) Վերջին անգամ— 100,000 վոսկի։ (Լռություն) Ծախված է։

ԻՍԽԵԼ.

(Ցետ գալով, առնում է շարոցը յեվ խոնարհությամբ յերկարելով Արարողապետին) Խոնարհությամբ և յերախտագիտությամբ նվիրում եմ այս չնչին իրը նորին ոգոստափառ կայսեր արարողապետին։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Ապրիս, հավատարիմ և հլու ծառա։ Բայց արքունի սպասավորները վոչինչ չեն տանի իրենց հետ այս ապարանքից։

ԻՍԽԵԼ.

(Զարմիտ մի հայացք դեպի Հաջի Զելեբին յեվ հերթով մյուս ամիրաներին, խոնարհվելով յեվ յետ գնալով՝ մոտենում է մատուռի դռան)։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Ծախիր մնացածները, մունետիկ։

ԻՍԽԵԼ.

(Ճանկոտելով պատը՝ բաց է անում մատուռի դուռը)։ Ա՜, այստեղ ուրիշ հարստություններ կան, տեր իմ։ (Մտնում և ներս)։

ՊՈՂՈՍ ԱՄԻՐԱ.

(Դաղտնի կերպով փսխչում է դուրս)։

ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐԱ.

(Դողում է դժգունած)։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

(Անկարագրելի սառնասրտությամբ միրուքն է շփում յեվ նայում անորոշ ուղղությամբ)։

ՍԵՆԵԿԱՊԵՏ.

Ցերեկի պահված է հարստությունը։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

(Դազազած) Նոր հանց սնքներ են բարդվում դիակների վրա։ (Հաջի Զելեբուն) Ի՞նչ է այդ, Հաջի Զելեբի։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Մենք միասին ենք ականատես լինում առաջին անգամ, տեր իմ։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Անծանոթ է ձեզ այդ սենյակը։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Բոլորովին անծանոթ։

ՀԱԼԵՏ.

Այս տան այնքան ժոռիկ անձնավորություն և անծանոթ։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Այս տան ներքին ընտանեկան և առևտրական գործերին դուք եյիք ավելի ծանոթ, Հալետ եֆենդի։ Ոգոստափառ սուլթանը ձեր ցուցմունքներով գլխատել տվեց Տյուզյաններին։

ՀԱԼԵՏ.

Իմ գիտեցածի չափով դուք ևս տեղյակ եյիք հանցավորների գործերին։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Ինչ վոր ել լինի, պահված է հարստությունը։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Ուրախ եմ, վոր գաղտնիքը պարզված է, և չի տուժի կայսերական գանձը։

ԻՍԽԵԼ.

(Ներսից բաց է անում մատուռի պատերը աջ ու ձախ կողմերի վրա։ Մատուռը նույնանում է դահլիճի հետ։ Մատուռի բոլոր մոմերը վառված են։ Տաճարի ֆոնում յերևվում է ս. կույս Մարիամի մեծադիր նկարը, տաճարի վրա պատարագի բոլոր սարքը։ Տաճարի առջև ծնկի յեն յեկած մայրը յեվ հարսը սեվեր հագած յեվ կաթոլիկական վարդարանը ձեռքերին. յերկուսն ել մրմնջում են «վողջույն քեզ, ս. կույս Մարիամ» յերգը։ Պատերը բացվելուց հետո նրանք անտարբեր շարունակում են յերգը։ Մատուռի աջ ու ձախ պատերի վրա կախված են Քրիստոսի խաչելության մեծադիր բրոնզե արձանները, առաջները վառվում են մոմը։ Իսխելը ամբողջ մատուռը բանալուց հետո սկսում է մի շնական յեվ յերկար ծիծաղ)։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Յեկեղեցի...

ՀԱԼԵՏ.

Պարզվում է ամեն ինչ։

ԻՍԽԵԼ.

Կաթոլիկ յեկեղեցի։ Կաթոլիկ պաշտամունք։

ՍԵՆԵԿԱՊԵՏ.

Պիտի լուր տալ նորին ոգոստափառության։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Պիտի գլխատել և կանանց։

ՀԱՋԻ ՉԵԼԵԲԻ.

Սրա հեղինակները պատժված են, տեր իմ։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Պիտի կրկին պատժել։

ՀԱՋԻ ՉԵԼԵԲԻ.

(Թեթեվ ժպիտով) Պիտի վերագլխատել, այո, տեր իմ։

ԻՍԽԵԼ.

(Բարձրանում է տաճարը, առնում է սկիհը, բերում է ներքեվ յեվ արհամարհական արտահայտությամբ մոտենալով Հաջի Չելեբուն յեվ բարձր հոհոալով) Այս ինչ է, ա. թքամն (թքում է սկիհի մեջ)։

ՀԱԼԵՏ.

(Հոհոում է)։

ՀԱՋԻ ՉԵԼԵԲԻ.

(Շառաչուն մի ապտակ է իջեցնում Իսխելին)։

ԲՈԼՈՐԸ.

(Խառնվում են իրար)։

ԻՍԽԵԼ.

(Մի պահ շփոթվում է յեվ զայրույթի արտահայտություն է ստանում, բայց իսկույն քմծիծաղով խոնարհվում է Արարողապետի յեվ Հալետի առաջ) Յես վիրավորված եմ զգում, վոր այս կաթոլիկը անպատվում է Ձեզ։

ՀԱԼԵՏ.

Շուտով սուլթանից հրաման ձեռք կբերեմ քո գլուխը կտրելու անձամբ Խաթիբը Հյումայունի առաջ։ Յերդվում եմ մարգարեյի անունով։

ՀԱՋԻ ՉԵԼԵԲԻ.

Ձեր սուրը շատ է մաշվել իմ գլուխը կտրելու համար։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Ձեր գլուխը կգնա, յեթե դուք մատ ունեք այս գործում։

ՀԱՋԻ ՉԵԼԵԲԻ.

Մի ժոռանաք, տեր իմ, վոր այս ապարանքը Տյուզյան ամիրաների ապարանքն է։

ԻՍԽԵԼ.

Այսպիսի մի մատուռ կարելի յե գտնել և ձեր ապարանքում։

ՀԱՋԻ ՉԵԼԵԲԻ.

(Խիստ նայում է Իսխելին յեվ չի պատասխանում)։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Ուղարկեցեք այս մատուռի ամբողջ հարստությունը հայոց պատրիարքարան։ Մունեսիկ, աճուրդի դիր և այս ապարանքը։

ՄՈՒՆԵՏԻԿ.

Ծախու յե ապարանքը, վոսրոբահայաց այս շքեղ բնակարանը։

ԻՍԽԵԼ.

250,000 վոսկի։

ՄՈՒՆԵՏԻԿ.

250,000 վոսկի։ (Լռություն) 250,000 վոսկի։ (Լռություն) 250,000 վոսկի։ Վերջին անգամ — 250,000 վոսկի։ (Լռություն) Ծախված է։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Պիտի ուղարկել այսոր ևեթ յեկեղեցու բոլոր հարբստությունը հայոց պատրիարքարան։ (Գնում է)։

ԱԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Ինչքան ժամանակ եք տալու, տեր իմ, կանանց տեղափոխելու այս ապարանքից։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Այսոր ևեթ պետք է դուրս գան։ Ապարանքը պատկանում է Իսխելին։

ԻՍԽԵԼ.

(Հոնում է)։

ՀԱԼԵՏ.

Հաջի Զելեբին լավ է իմանում սեփականության իրավունքը, տեր իմ։

ԻՍԽԵԼ.

Վճարել եմ յես դրա համար իմ ճակատի քրտինքները։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Դուք ձեր քրտինքները վճարեցիք վոչ թե ապարանքին, այլ իմ ապտակին։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

(Դուրս։ Նրա յետեվից դուրս են գնում սենեկապետը, Ա. Թարզմանը յեվ յերկու պալատականները)։

ԻՍԽԵԼ.

(Գազազած) Լսեցիք դուք Հալետ Եֆենդիի յերդումը։

ՀԱԼԵՏ.

Յերդվում եմ՝ դուք յետ կստանաք այդ ապտակը ձեր գլխով։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Տյուզյանները շատ յերիտասարդ և միամիտ եյին, Հալետ Եֆենդի։ Յես 40 տարեկան եմ։

ՀԱԼԵՏ.

40 գլուխ եյ ունենաք, վաղը չպետք է լինի նրանցից և վոչ մեկը։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

(Ջղային շարժումներով միրուքն է շփում)։

ԻՍԽԵԼ.

Մի մոռանաք, ամիրա, վոր այս ապարանքը ինձ է պատկանում և ձեր ներկայությունը հաճելի չե։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

(Գազազած աչքերով յեվ քթերի ծակերը լայն-լայն բացած՝ նայում է Իսխելին, ապա մոնում է մատուցը յեվ Տյուզյանների մոր թեվից բռնելով՝ բարձրացնում է, իսկ հարսին ձեռքից յեվ գնում են դահլիճի դռնից դուրս)։

ՄԱՅՐԸ.

(Դուրս գալուց առաջ արցունքոտ աչքերով նայում է ամբողջ դահլիճին յեվ լուռ հեռանում)։

ՀԱՐՍԸ.

(Գլխիկոր յեվ լալով հեռանում է)։

(Նրանց հետեվում են բոլորը, բացի Հալետից յեվ Իսխելից)։

ԻՍԽԵԼ.

Իմ բոլոր ծառայությունների փոխարեն յես մինչև հիմա վոչինչ չեմ խնդրած ձեզանից։ Պահանջում եմ հիմա Հաջի Զելեբու գլուխը։

ՀԱԼԵՏ.

Յերդվեցի մարգարեյի անունով և կկատարեմ, բայց սուլթանին պետք է հասկացնել և ձեռք բերել գլխատման հրամանը։

ԻՍԽԵԼ.

Գլուխը, Հալետ Եֆենդի, Հաջի Զելեբու գլուխը, յե-

թե վոչ չեմ կարող տանել կաթոլիկ սրիկայի ապտակը։

ՀԱԼԵՏ.

Պետք է պատճառաբանել նրա գլուխը կտրելու պահանջը։ Հաջի Զելեբին արքունի գլխավոր սեղանավորն է։

ԻՍԽԵԼ.

Պահանջում եմ յես ձեզանից իմ բոլոր ծառայությունների հատուցումը։ Յերեսուն տարի ամբողջ յես ծառայել եմ հարստացնելու ձեզ, հարթել եմ ձեր առաջ ցցված բոլոր խոչընդոտները Բաղդադից մինչև Ստամբոլ։ Հիշում եք՝ յես իմ ճանկերով փորեցի տասնյակ հորեր՝ թաղելու համար ձեր անձնական թշնամիներին։ Կրել եմ թուք, մուր, վիրավորել են իմ ցեղային արժանապատվությունը, և պահել եմ հավիտենական լռություն՝ չվտանգելու համար միայն և միայն ձեզ։ Պահանջում եմ կաթոլիկ ամիրայի գլուխը։ Յես բարոյական իրավունք ունեյի սպասելու, վոր դուք ապտակին կպատասխանեք գեթ ժամանակավոր ապտակով, բայց դուք միայն սպառնացաք սպանությամբ. ակնկալում եմ, վոր գեթ այս սպառնալիքը իրագործեք վաղը արշալուսին։

ՀԱԼԵՏ.

Իմ յերդումը յերդում է, Իսխել, միայն պետք է գտնել պատճառը՝ համոզելու թագավորին նրա գլխատման հրաժանը տալու։

ԻՍԽԵԼ.

Յես արել եմ ամեն ինչ, վտանգելով իմ կյանքը, վորպեսզի ձեզ ազատեմ ամեն տեսակի վտանգներից։ Հալետ եֆենդի, պիտի անեք ամեն ինչ ինձ ապտակողին պատժելու համար։

ՀԱԼԵՏ.

Դավաղրության մեջ դու վարպետ ես, Իսխել, գտիր հնարքը, յես գործադրեմ։

ԻՍԽԵԼ.

Յես կգտնեմ հնարը, յեթե դուք, Հալետ եֆենդի, արիություն ցույց տաք։

ՀԱԼԵՏ.

Պատրաստ եմ։

ԻՍԽԵԼ.

(Ձղային յերթեվեկում է դանդաղում, միրուքի թելերը քաշում է յեվ կծում) Առևտրական գեղծարարություն անհնարին է վերագրել Հաջի Զելեբուն։ Ստամբոլի մեջ նա ամենախորամանկ և ամենավարպետ մարդն է։

ՀԱԼԵՏ.

Ապա։

ԻՍԽԵԼ.

Նրան պետք է ամբաստանել ճշմարիտ կրոնի դեմ հայհոյած և գործած լինելու մեջ։

ՀԱԼԵՏ.

Ճշմարիտ կրոնի դեմ... կասկածում եմ։

ԻՍԽԵԼ.

Մեղսակից է նա կաթոլիկ պաշտամունքի։ Կաթոլիկ պաշտամունքը արգելված է Օսմանյան կայսրության բոլոր սահմաններում։

ՀԱԼԵՏ.

Այդ կլինի, յեթե մենք հաստատապես համոզված լինենք, վոր նա մի այսպիսի մատուռ ունի իր ապարանքում։

ԻՍԽԵԼ.

Դա հեշտ է. բայց ժամանակի կկարոտի։ (Բարկացած) Յես նրա գլխատումը ուզում եմ տեսնել հենց վաղն առավոտ։

ՀԱԼԵՏ.

(Յերթեվեկում է) Կարելի՞ յե առանց ատուգելու ամբաստանել։

ԻՍԽԵԼ.

Առանց սատուգելու սուլթանը նրան գլխատելու հրաման չի տա։

ՀԱԼԵՏ.

Ինչպես պիտի անել։ Դավադրիր, և յես անեմ։

ԻՍԽԵԼ.

(Ձղային յերթեվեկ։ Նստում է մի բազկաթոռի վրա յեվ ընկնում է խորը մտածմունքի մեջ) Դա՛։ Դուք կարող եք, Հալետ եֆենդի, այս գիշեր ունկնդրություն խնդրել սուլթանից։

ՀԱԼԵՏ.

Ա՞յս գիշեր։

ԻՍԽԵԼ.

Այո, այս գիշեր։

ՀԱԼԵՏ.

(Տատանվելով) Այո։

ԻՍԽԵԼ.

Կներկայանանք սուլթանին յերեք հոջաներով և կհայտնենք նրան, վոր հոջաները իրենց աչքերով տեսել են, վոր, իբրև կրոնական վրեժխնդրություն, Հաջի Զելեբին ինձ ապտակելուց հետո գնացել է Այա-Սոֆիա և կեղտոտել է Այա-Սոֆիայի շեմքի վրա։

ՀԱԼԵՏ.

Ո՞վ կհամաձայնի գալ և վկայել։

ԻՍԽԵԼ.

Յես կգտնեմ։ Հարուստ եմ յես։

ՀԱԼԵՏ.

Գտիր, և այդ բավական է։

ԻՍԽԵԼ.

(Ուրախացած, շփելով իր մերուքը յեվ նայելով զետնին, ինքն իրեն) Յես, յես կգտնեմ։ Կվատնեմ Տյուզյանների մարգարիտներն ու ադամանդները։ (Շարոցը վերցնում է սեղանի վրայից)։

ՀԱԼԵՏ.

Շուտ պետք է գտնել։

ԻՍԽԵԼ.

Ինձ խեղդում է այդ ապտակը։ Ապտակը վառում է իմ արժանապատվությունը։ (Դուրս է գնում արագ քայլերով)։

ՎԱՐԱԳՈՒՅՐ

II ՊԱՏԿԵՐ

Սուլթանական Սարայի դահլիճներից մեկը, խորքում ծովանայաց պատշգամբով։ Մտնում են Մեծ Վեզիրը յեվ Բ. Սենեկապետը։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Անտանելի յե կայսրության դրությունը—ահավոր սպառնություններ, ավազակություն, որը ցերեկով կողոպուտներ և հափշտակություններ։ Մայրաքաղաքը դառել է մի հսկա պոռնկանոց։ Մայրաքաղաքի բնակչության ինքնուն տոկոսը արտադրում են ճարպ, կիրք և կղկղանք։ Հարբեցողություն, շվայտություն և շռայլություն։

Բ. ՍԵՆԵԿԱՊԵՏ.

Իզուր եք մտահոգվում այդ մասին, մեծ վեզիր, այդ մտահոգությունը նշանակում է վտանգ ձեր պաշտոնին։ Զեք հարատևի, յեթե շատ խոսեք։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Մի՞թե։

Բ. ՍԵՆԵԿԱՊԵՏ.

Ներկայացրեք ամեն ինչ փայլուն, չափազանցրեք լավ բաները, իսկ ձեր կոկորդում խեղդեցեք բոլոր կայսերական մոլութիւնները։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Կարող եմ յես խեղդվել։

Բ. ՍԵՆԵԿԱՊԵՏ.

Մարդկային կոկորդից ավելի անհատակ ծակ չկա, մեծ վեզիր։ Այդ ծակում կարելի յե պարփակել մի վողջ աշխարհ սուտ։ Յեվ այդ բոլորից հետո, յերբ կհարստանաք, մեծ վեզիր, կառուցել կտաք մի մզկիթ և կապահովեք մի լուսավոր անկյուն իսլամական դրախտում։ Սխալ ե, վոր մարդիկ սիրում են ճշմարտությունը և ճշմարիտ մարդկանց։ Մարդիկ սիրում են սուտը, սուտը ատամներ չունի, սուտը քաղցր ե, դուրեկան, սուտի մեջ վոչ մի ցավ չկա։ Յես ճանաչում եմ մարդկանց, մեծ վեզիր։ Ճշմարտությունը անողոք ե, մի լինիք անողոք։ Գալիս ե սուլթանը։

ՍՈՒԼԹԱՆ.

(Մտնում ե)։

Բ. ՍԵՆԵԿԱՊԵՏ.

(Խոնարհվելով) Ոգոստափառ։ (Դուրս)։

ՍՈՒԼԹԱՆ.

(Դեպի պատշգամբը) Հրաշալի յե ծովը, մեծ վեզիր, հրաշալի։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Ծովը միշտ հրաշալի յե, ոգոստափառ։

ՍՈՒԼԹԱՆ.

Չեմ սիրում, յերբ ծովը կորցնում ե իր կախարդական կապույտը։ Ատում եմ դորշ ծովը։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Դորշ ծովերն ել ունեն իրենց վեհությունը, Ոգոստափառ, բայց Ձեր ասած ծովը միշտ հրաշալի յե։

ՍՈՒԼԹԱՆ.

(Պատշգամբում) Կուզենայի այսոր հարճերիցս մեկի հետ զվարճանալ այս պատշգամբի վրա։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Այսոր Նորին Վեհափառության ընդունելության որն ե։ Թող չմոռանա Ոգոստափառը, վոր ոսմանյան գահակալները յերբեք չեն թերացել իրենց պետական գործերում։ Այնուամենայնիվ, ինչ վոր իմ Ոգոստափառ Սուլթանն ե կամենում...

ՍՈՒԼԹԱՆ.

Ցանկանում եմ այսոր զվարճանալ։ Ուրիշ վոչինչ։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Անժխտելի յե Ոգոստափառ Կայսեր ցանկությունը։

ՍՈՒԼԹԱՆ.

Ինչ լուր իմ կայսրության սահմաններից։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Խաղաղության լուրեր։

ՍՈՒԼԹԱՆ.

Ի՞նչ վիճակի մեջ ե մայրաքաղաքը։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Հանգիստ և հարուստ Կայսեր շնորհիվ։ Միակ կայսրությունը, ուր սպանություններ և ավազակություններ չեն պատահում։

ՍՈՒԼԹԱՆ.

Գո՞հ են իմ հպատակները։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Ավելի քան գոհ. կյանքը ազատ, ինչքը՝ ապահով և պատիվը՝ անձեռնմխելի։

ՍՈՒԼԹԱՆ.

Կայսրության խուլ անկյուններում վոչինչ չի պատահում։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Վոչ մի անախորժ դեպք, Ոգոստափառ։

ՍՈՒԼԹԱՆ.

Ամբողջովին զսպված են յենիչերիները։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Կարուկ է սուրը մեր Ոգոստափառ Կայսեր։

ՍՈՒԼԹԱՆ.

Գլխատվեցին բանակի հաց հայթայթող զեղծարարները։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Այո, տեր իմ, այս արշալուսին։

ՍՈՒԼԹԱՆ.

Ցերը կմեկնի ներքին գործերի նազիրը դեպի կայսրության արևելյան սահմանները։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Մեկնեց յերեկ իրիկվա նավով։

ՍՈՒԼԹԱՆ.

Պետք եր հրահանգել նրան լավ աչքով նայել անհավատ հայերին. նրանք իմ կայսրության ոգտակար տարրերն են։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Անհավատների ոգտակարության չեմ հավատում. թող նրանք լինեն մեր Ոգոստափառ Սուլթանը։

ՍՈՒԼԹԱՆ.

Դուք պետականորեն չեք մտածում, մեծ վեզիր։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Թող նրանք լինեն մեր Ղազի Սուլթանը։

ՍՈՒԼԹԱՆ.

Ի՞նչ լուր Արարողապետից։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Նա շուտով այստեղ կլինի զեկուցելու Ձեզ, տեր իմ, Տյուզյանների ամուրդի մասին։

ՍՈՒԼԹԱՆ.

Միայն կարճ կապի։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Տեսնում է մեր Ոգոստափառ Սուլթանը, վոր Տյուզյաններն ել հայեր եյին և անհավատարիմ գտնվեցին կայսրության փողերանոցի գործում։

ՍՈՒԼԹԱՆ.

Ցես դեռևս բոլորովին համոզված չեմ նրանց մեղավորության մասին։ Ճիշտ է, հրամայեցի գլխատել, բայց դա վոչինչ չի նշանակում։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Մթթե Հալեա եֆենդիի փաստերը կասկածելի եյին։ Նա շատ մեծ ծառայություններ է մատուցել Ոսմանյան գահին և ժողովրդին։

ՍՈՒԼԹԱՆ.

Այդ ծառայությունները յես չեմ տեսնում, և ինձ դուր չի գալիս նրա անսահման փողասիրությունը։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Մարդկային է, Ոգոստափառ, մենք բոլորս սիրում ենք փողը։

ՍՈՒԼԹԱՆ.

Ինչ վոր է, պետք է շահել մյուս ամիրաների սրտերը։ Իմ կայսրության ամբողջ յելևմուտքը նրանց ձեռքին է։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Մթթե մեր իսլամ յեղբայրները չեն կարող այնքան ոգտակար լինել այդ առպարիզում, վորքան անհավատները, տեր իմ։

ՍՈՒԼԹԱՆ.

Յելևմտական գործերում իսլամները շատ անճարակ են։ Հիշում եք, Վեզիր, Ձեզ ուղարկեցի Արևելյան Ռումելի և...

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Իմ անճարակությունը Նորին Ողորմությունը թող չվերագրի իմ բոլոր ցեղակիցներին։

ՍՈՒԼԹԱՆ.

Դուք նրանց մեջ տանելին եք, Մեծ Վեզիր, այնուամենայնիվ։

Ա. ՍԵՆԵԿԱՊԵՏ.

(Մտնելով յեվ խոնարհվելով) Արարողապետը ունկնդրություն է խնդրում Նորին Վեհափառությունից։ Մենք միասին վերադարձանք Տյուզյանների ապարանքից։

ՍՈՒԼԹԱՆ.

Պետք է կարճ կապել սակայն պատմությունը, Սենեկապետ։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Ինչպես վոր հրամայում է Նորին Վեհափառությունը։ (Դուրս)։

ՍՈՒԼԹԱՆ.

Ձանձրանում եմ։

(Մտնում են Արարողապետ, Ա. Սենեկապետ յեվ Ա. Թարգման, բոլորը խոնարհվում են)։

ՍՈՒԼԹԱՆ.

Խոսեցեք, Արարողապետ։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Ծախեցինք Տյուզյանների կահկարասիները և ապարանքը։ Ակնատես յեղանք, Ողորմություն, նրանց դիզած հարստության։ Ոսմանյան վողջ փողերանոցը կուլ է գնացել նրանց անկշտում կոկորդից։

ՍՈՒԼԹԱՆ.

Կարճ, Արարողապետ, կարճ։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

(Խոնարհվում է) Նորին Ողորմություն Կայսեր մի տխուր լուր ունեմ հայտնելու։

ՍՈՒԼԹԱՆ.

Տխուր լուր։ Տրամադրություն չունեմ լսելու։ Ցանկանում եմ այսոր զվարճանալ։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Վոչ մի տխուր լուր չպետք է մթագնի Ոսմանյան կայսեր ճակատը։

ՍՈՒԼԹԱՆ.

Ասացեք, Արարողապետ։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Նորին Վեհափառությունը քաջ ծանոթ է, վոր կայսրության սահմաններում արգելված եր կաթոլիկ կրոնի պաշտամունքը։ Այս որենքը լինելով մեր որենքներից ամենից...

ՍՈՒԼԹԱՆ.

Կարճ։ Հոգնել եմ յես կաթոլիկ և լուսավորչական վեճերից։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Սաֆուրդի ընթացքում Տյուզյանների ապարանքում բացվեց մի մատուռ, մի կաթոլիկ յեկեղեցի։

ՍՈՒԼԹԱՆ.

Այդ բավական է, վոր յես հիմա՛ խորապես համոզվեմ նրանց գլխատելու վճռում։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Մատուռի բացվելուց հետո...

ՍՈՒԼԹԱՆ.

Չեմ ցանկանում լսել ավելին։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Մատուռի բացումը ցույց տվեց...

ՍՈՒԼԹԱՆ.

(Զայրացած) Բավական է։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

(Խոնարհվում է յեվ նրա հետ բոլորը)։

ՍՈՒԼԹԱՆ.

(Ցերկար լռություն։ Բոլորը խոնարհված դիրքում) Ծախեցիք մատուռի գույքերը։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

(Շտկվում է, նրա հետ մյուսներն ել) Վոչ, Ոգոտափառ, կարգադրեցի, վոր յեկեղեցական բոլոր անոթներն ուղարկվեն հայոց պատրիարքին։

ՍՈՒԼԹԱՆ.

Լավ, այժմ գնացեք բոլորդ։ Սենեկապետ, այստեղ ուղարկիր իմ կրետացի հարճին։

Բ. ՍԵՆԵԿԱՊԵՏ.

Կկատարվի կայծակի արագությամբ։

(Բոլորը դուրս՝ են գնում խոնարհվելով յեվ յետ-յետ քաշվելով)։

ՍՈՒԼԹԱՆ.

Խաղաղ է իմ կայսրությունը, պետք է զվարճանալ։

Բ. ՍԵՆԵԿԱՊԵՏ.

(Ներս։ Յետեվից կրետացի հարճը) Կատարված է Նորին Ոգոստոսափառ կայսեր հրամանը։ (Խոնարհվելով դուրս)։

ՀԱՐՃ.

(Ծունկ է չոքում Սուլթանի առաջ)։

ՍՈՒԼԹԱՆ.

Բարձրացիր իմ ծնկներին։

ՀԱՐՃԸ.

(Բարձրանում է յեվ նստում Սուլթանի ծնկներին)։

ՍՈՒԼԹԱՆ.

(Վավաշոտ սիրաբանելով) Այսոր իմ տրամադրությունը բարձր է, խնդրիր ինձանից՝ ինչ վոր ցանկանում ես, և յես կշնորհեմ քեզ։

ՀԱՐՃ.

Թող թույլ տա իմ կայսրը, վոր յես վերադառնամ Կրետե։

ՍՈՒԼԹԱՆ.

Շնորհված է։ Կգնաս Կրետե մի քանի ամսով։

ՀԱՐՃ.

Թող թույլ տա իմ կայսրը պարեմ իր համար։

ՍՈՒԼԹԱՆ.

(Լկտի համբույրից հետո՝ բաց է թողնում նրան)։

ՀԱՐՃ.

(Սկսում է պարել մի կրքոտ պար)։

ՍՈՒԼԹԱՆ.

(Կիսատ թողնելով պարը, գրկում է հարճին յեվ կորավում է վարագույրների յետեվ)։

Բ. ՍԵՆԵԿԱՊԵՏ.

(Դաղտագողի մտնելով ներս, նայում է չորս կողմը յեվ վոչ վոքին չնկատելով՝ հեռանում է։ Քիչ անց նորից է մտնում յեվ այս անգամ սկսում է հազալ)։

ՍՈՒԼԹԱՆ.

(Վարագույրների յետեվից յերեվալով) Ո՞վ է։ Ի՞նչ կա։

Բ. ՍԵՆԵԿԱՊԵՏ.

Շեյխ-իլ-իսլամը խնդրում է ունկնդրություն Խալիֆայից։

ՍՈՒԼԹԱՆ.

Նեբս առաջնորդեցեք։

ՀԱՐՃ.

(Ցերեվում է վարագույրների յետեվից յեվ խոնարհվելով Սուլթանի առաջ՝ արագ քայլերով հեռանում է։ Մտնում են Շեյխ-իլ-իսլամը յեվ Հաջի Զելեբին)։

ՇԵՅԽ-ԻԻԼ-ԻՍԼԱՄ.

Ինձ վիճակված է իսլամության Խալիֆային միշտ հաղորդելու մեր կրոնի նորանոր հաղթությունները։

ՍՈՒԼԹԱՆ.

Ճշմարիտ կրոնի բախտը այդպես է, Շեյխ-իլ-իսլամ, նա կտիրի վողջ աշխարհին։

ՇԵՅԽ-ԻԻԼ-ԻՍԼԱՄ.

Դրան հավատում է հավատացյալների ամբողջ բազմությունը։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

(Խոնարհվում է)։

ՍՈՒԼԹԱՆ.

(Ապշում է)։

ՇԵՅԽ-ԻԻԼ-ԻՍԼԱՄ.

Հաջի Զելեբին, մեր պետության ամենահավատարիմ անհավատ ծառան, ընդունեց ճշմարիտ կրոնը։

ՍՈՒԼԹԱՆ.

Շնորհավորում եմ, Հաջի Զելեբի։ Իմ կայսրության մեջ դու կհասնես մեծագույն պաշտոնների։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Պաշտոններն ինձ չեն շահագրգռում, իմ Վեհափառ Խանը Ղազի Սուլթան, ինձ շահագրգռում է լույսը ճշմարիտ կրոնում։ Ցեսս տեսնում եմ այն իմ հոգու աչքերով։ Միքանի անգամներ ինձ թվացել է, որ յես ապրում եմ ծանր խավարում, բայց այսոր զգում եմ, որ աչքեր ունեմ և տեսնում եմ, ականջներ ունեմ և լսում եմ։

ՍՈՒԼԹԱՆ.

Հավատում եմ քո խոսքերին. լույսը ճշմարտություն է, և տեսնողը այդպես էլ զգում է։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

(Խոնարհվում է)։

ՇԵՅԽ-ԻԻԼ-ԻՍԼԱՄ.

Ողջոստափառ Տեր, յես ցանկացա, որ Հաջի Զելեբին իր իսլամական ապարոշը կապի Մարգարեյի հաջորդի ներկայության։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

(Ծունկ է չոքում Սուլթանի առաջ)։

ՇԵՅԽ-ԻԻԼ-ԻՍԼԱՄ.

(Ցալիս է մի ոսկեգույն ապարոշ Սուլթանին, յեվ Սուլթանը կապում է Հաջի Զելեբու ֆեսի շուրջը)։

ՍՈՒԼԹԱՆ.

(Կանգնող ներքինուն) Կանչիր այստեղ հանդերձապետին։

ՆԵՐՔԻՆԻ.

(Դուրս)։

ՍՈՒԼԹԱՆ.

Մարգարեյի հաջորդը ցանկանում է վարձատրել քեզ իր վերարկուներից մեկով։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

(Խոնարհվում է Սուլթանի առաջ յեվ համբուրում է նրա վերարկուի քղանցքները)։

ՀԱՆԴԵՐՁԱՊԵՏ.

Ի՞նչ է հրամայում իմ տերը։

ՍՈՒԼԹԱՆ.

Բեր այստեղ խոկույն իմ վերարկուներից մեկը։

ՀԱՆԴԵՐՁԱՊԵՏ.

(Դուրս)։

ՇԵՅԽ-ԻԻԼ-ԻՍԼԱՄ.

Հավատում եմ, որ սրանից հետո Հաջի Զելեբին կծառայի կայսրության և Խալիֆային հարյուր անգամ ավելի յեռանդով և հավատարմությամբ։

ՍՈՒԼԹԱՆ.

Կվարձատրվի նա Մարգարեյի կողմից։

ՀԱՆԴԵՐՁԱՊԵՏ.

(Ներս է գալիս վերարկուով յեվ տալիս է Սուլթանին)։

ՍՈՒԼԹԱՆ.

(Առնելով վերարկուն՝ ձգում է Հաջի Զելեբու վրա)։

ՀԱՆԴԵՐՁԱՊԵՏ.

(Դուրս)։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

(Համբուրելով վերարկուն՝ վոտի յե կանգնում, հագնում է յեվ գլուխը ծռած՝ նայում է գետին)։

ՍՈՒԼԹԱՆ.

Խնդրիր, Հաջի Զելեբի, քո ցանկացած բարձր պաշտոնը, և յես կտամ քեզ։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Ինչպես ասացի՝ պաշտոնները ինձ չեն շահագրգռում. մի փոքրիկ, համեստ պաշտոնում յես ոգտակարությամբ կծառայեմ իմ փադիշահին և ճշմարիտ կրոնին։

ՍՈՒԼԹԱՆ.

Ցես քեզ նշանակում եմ Արքունի գանձարանի պետ։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Աղաչում եմ իմ Խալիֆայից և փատիշահից չվիրավորել իմ համեստությունը։

ՍՈՒԼԹԱՆ.

Ցես քեզ նշանակում եմ Անգլիայի դեսպան։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Իմ փադիշահը և իմ Խալիֆան թող չաքսորի իր ամենասարուկ ծառային հայրենիքից դուրս։ Ցես ատում եմ քրիստոնյա ժողովուրդներին և պետություններին։

ՇԵՅԽ-ԻԻԼ-ԻՍԼԱՄ.

Թույլ տվեք, Ոգոստոփառ տեր, վոր Հաջի Զելեբին ինքը ընտրի իր պաշտոնը։

ՍՈՒԼԹԱՆ.

Այդպես թող լինի։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Փադիշահի և Խալիֆայի ամենահլու ծառան խնդրում է իր տիրոջից նշանակել իրեն մաքսատան վերատեսուչ, ուր նա կարող է հսկել կայսրության արտաքսության և ներածության, մի պաշտոն, վորի մեջ նա կարող է լավագույն կերպով ծառայել իր Փադիշահի լայնածավալ կայսրության։

ՍՈՒԼԹԱՆ.

Մեծ մարդիկ փոքր պաշտոնների մեջ չեն կարող ոգտակար լինել, բայց կփորձեմ։ (Ներքինուն) Կանչիր Մեծ Վեզիրին։

ՆԵՐՔԻՆԻ.

(Դուրս)։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

(Ներս) Հրամայեցեք, տեր իմ։

ՍՈՒԼԹԱՆ.

Նշանակում եմ Հաջի Զելեբուն...

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

(Նայելով Հաջի Զելեբուն յեվ տեսնելով իսլամական տարազով՝ ապշում է)։

ՍՈՒԼԹԱՆ.

Մաքսատան վերատեսուչ։ Հայտարարիր առանձին հրովարտակով։ Նվիրում եմ նրան Օսմանիե առաջին ականակուռ շքանշան։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Լսում եմ, տեր իմ։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

(Ելի խոնարհվում է Սուլթանի առաջ)։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

(Դուրս)։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

Դողում եմ, Փադիշահ, իմ զգացած շնորհակալության և յերախտագիտության խորությունից։ Միայն մի բան ունի պաղատելու ճշմարիտ կրոնի ամենախոնարհ ծառան և Ձեր կայսրության ամենահետին հպատակը։

ՍՈՒԼԹԱՆ.

Կկատարվի քո ցանկությունը։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

Իմ ընտանիքը մնում է խավարի մեջ։ Մաղթում եմ Ալլահին, որ նրանք ել մի որ լույսը տեսնեն և փոխեն իրենց հավատքը, բայց առայժմ մնում են քրիստոնյա։ Պաղատում եմ իմ Փադիշահից և Խալիֆայից ներել նրանց իրենց կուրությունը և ազատ կացուցանել նրանց իրենց կրոնի մեջ։

ՍՈՒԼԹԱՆ.

Միայն մի պայմանով, որ վոչ մի հարաբերություն չես ունենա քո ընտանիքի հետ։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

Հոժար եմ։

ՇԵՅԽ-ԻԻԼ-ԻՍԼԱՄ.

Ցեվ պետք է ամուսնանաս մի իսլամ կնոջ հետ։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

Ցեթե Մարգարեն կամեցել և շնորհել ինձ մի հուրի իսլամական ջեննեթից, յես պատրաստ եմ թոթափելու իմ մարմնի բոլոր մեղքերը և լվացվելու ճշմարիտ կրոնի անմահական ջրով։

ՇԵՅԽ-ԻԻԼ-ԻՍԼԱՄ.

Մարգարեն վոչ մի իսլամի չի զլացել և չի զլանալու մի հուրի։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

Կամուսնանամ խակուն ևեթ։

ՍՈՒԼԹԱՆ.

Քո ընտանիքը կմնա անձեռնմխելի։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

(Համբուրելով Սուլթանի վերարկուի քղանցքները) Իմ Փադիշահը թող ների ինձ վերջին անգամ տեսնելու իմ կնոջը և զավակներին, հաղորդելու նրանց, վոր յես տեսա ճշմարիտ լույսը։

ՍՈՒԼԹԱՆ.

Միայն մի անգամ։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

(Համբուրում է Սուլթանի վերարկուի քղանցքները)։

ՍԵՆԵԿԱՊԵՏ.

(Ներս) Հալետ եֆենդին և Իսխելը խնդրում են Փադիշահից ունկնդրություն կայսրության կարևոր մի գործի համար։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

(Վոտի յե կանգնում յեվ ստանում է մոռախոն վիճակ)։

ՍՈՒԼԹԱՆ.

Ի՞նչ գործ ունի Իսխելը կայսրության գործի մեջ։

ՇԵՅԽ-ԻԻԼ-ԻՍԼԱՄ.

Հալետ եֆենդին առանց Իսխելի ման չի գալիս։ Ձեզ հայանի յե այդ։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

Վոչ մի մարդ առանց իր աչքերին և մաքին չի կարող ման գալ։

ՍՈՒԼԹԱՆ.

(Սենեկապետին) Հրամայում եմ ներկայանալ։

ՍԵՆԵԿԱՊԵՏ.

(Դուրս)։

ՇԵՅԽ-ԻԼ-ԻՍԼԱՄ.

Թերևս անհրաժեշտ է մեր գնալը։

ՍՈՒԼԹԱՆ.

Վո՛չ, վո՛չ, մնացեք այստեղ։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Թերևս միայն իմ գնալն է անհրաժեշտ։

ՍՈՒԼԹԱՆ.

Մնացէ՛ք այստեղ։

ՍԵՆԵԿԱՊԵՏ.

(Ներս) Հալետ եֆենդի և Իսխել։

(Ստնում են Հալետ յեվ Իսխել. խոնարհվում են Սուլթանի յեվ Շեյխ-Իլ-Իսլամի առաջ յեվ տեսնելով Հաջի Զելեբուն իսլամական տարազով՝ ապուշ են կտրում)։

ՍՈՒԼԹԱՆ.

Հայ ամիրաներից և իմ կայսրության ամենից իմաստուն ծառաներից Հաջի Զելեբին ընդունեց ճշմարիտ կրոնը։

ՀԱԼԵՏ.

Շնորհավորում եմ (վողջագուրվում են Հաջի Զելեբու հետ)։

ԻՍԽԵԼ.

(Անձայն վողջագուրվում է)։

ՍՈՒԼԹԱՆ

Հաջի Զելեբու իմ կայսրության մատուցած ծառայությունները շատ են յեղել։ Սրանից հետո, իբրև ճշմարիտ կրոնի զինվոր, շատ ավելի մեծ ծառայություններ կմատուցի։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Լույսի մեջ ավելի շիտակ կգործեմ, քան խավարի մեջ գործել եմ, թող վստահ լինի իմ Փադիշահը և Խալիֆան, և որհնված լինի նրա կյանքը։

ՀԱԼԵՏ ՅԵՎ ԻՍԽԵԼ.

(Խոնարհվում են Սուլթանի առաջ)։

ՍՈՒԼԹԱՆ.

Ի՞նչ գործի համար եյիք ուենկնդրություն խնդրում, Հալետ։

ՀԱԼԵՏ.

Կայսրության մի կարևոր գործի համար, տեր իմ։

ՍՈՒԼԹԱՆ.

Ասացեք։

ՀԱԼԵՏ.

(Տատանվում է)։

ՍՈՒԼԹԱՆ.

Շեյխ-Իլ-Իսլամը և Հաջի Զելեբին կայսրության և կրոնի սպասավորներ են։ Ասացեք նրանց ներկայության։

ՀԱԼԵՏ.

(Տատանվում է յեվ չի պատասխանում)։

ԻՍԽԵԼ.

(Առաջ անցնելով) Մենք նպատակ ունեյինք, տեր իմ, հաղորդելու Հաջի Զելեբու ճշմարիտ կրոնը ընդունելու լուրը իբրև կայսերական կրոնի հաղթություն։

ՇԵՅԽ-ԻԼ-ԻՍԼԱՄ.

Հա՛, հա՛, հա՛։ Յերբվանից Մովսեսի զավակներից մեկը մտահոգված է կայսրության կրոնի հաղթություններով։

ՀԱԼԵՏ.

Լուրը յես եյի բերում, յերբ իմ բարեկամ Իսխելը հանդիպեց և ցանկացավ միասին գալ, վորովհետև այս առավոտվա դեպքից հետո անհավատալի յեր Հաջի Զելեբու...

ՍՈՒԼԹԱՆ.

Բավական է։ Լույս տեսնողի հավատքը կարելի չէ կասկածի յենթարկել։ Գնանք, Շեյխ-Իլ-Իսլամ։

(Գնում է, Շեյխ-Իլ-Իսլամը յետեվից, մտում են Հաջի Զելեբի, Հալետ յեվ Իսխել)։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

(Աչքերը չռելով յերկուսի վրա՝ սկսում է հոհոալ)։

ՎԱՐԱԳՈՒՅՐ

III ՊԱՏԿԵՐ

Մի սենյակ Հաջի Չելեբու ապարանքում.
Մտնում են Սըրմա խանումն յեվ Սիրանուշը։

ՍԸՐՄԱ.

Չեմ կարող հավատալ, վոր նա իսլամանա։

ՍԻՐԱՆՈՒՇ.

Նայած թե ինչ ե պատահել, մայրիկ։ Կարծում եմ, վոր Տյուզյանների աճուրդի ժամանակ Իսխել հրեային ապտակելը, մեր կրոնին հասցրած նախատինքի համար, Յերկանյան ամիրային կարող եր դնել քաղաքական շատ անհանգիստ կացության մեջ։ Դժվար թե հայրիկը սխալներ գործի, մայրիկ, դու գիտես նրա անսահման իմաստությունը քաղաքական և առևտրական խնդիրներում։

ՍԸՐՄԱ.

Կրոնի դեմ յեղած նախատինքի համար կրոնը մոռանալ։ Ամիրան չեր անի այդ։

ՍԻՐԱՆՈՒՇ.

Մայրիկ, դու պետք ե ըմբռնես քաղաքական կացությունը։ Դեռ չի սառել Տյուզյանների արյունը։ Ամիրայական դասի համար ստեղծված ե անելանելի կացություն։

ՍԸՐՄԱ.

Յեթե սուլթանին նրան իսլամություն ընդունել, նա կնախընտրեր գլխատվել Տյուզյաններից հետո։

ՍԻՐԱՆՈՒՇ.

Հայրիկը այդպես բան չեր անի։

(Լռություն)

ՍԸՐՄԱ.

Կացությունը պարզ ե։ Վտանգ ե սպառնում ամիրայական դասին։

ՀԱԿՈԲ.

(Ներս) Ապարանքի մատուռը, տիկին, բոլորովին անհետացվեց, ինչպես պատվիրել եր ամիրան։

ՍԸՐՄԱ.

Ապրիս, Հակոբ, մեր տան ամենահավատարիմ ծառան դու յես։

ՀԱԿՈԲ.

(Խոնարհվում ե)։

ՍԸՐՄԱ.

Ուզում եյի ասել...

ՀԱԿՈԲ.

Ի՞նչ ե հրամայում իմ տիրուհին։

ՍԸՐՄԱ.

Վոչինչ, մատուռից վոչ մի հետք չթողնել։

ՀԱԿՈԲ.

(Դուրս)։

(Լռություն)

ՍԸՐՄԱ.

Սիրանուշ, գիշերվան վեր ժամն ե։

ՍԻՐԱՆՈՒՇ.

(Բանալով վարագույրը յեվ նայելով դուրս) Կապույտ լույս ե դուրսը, մայրիկ։ Սարայի ճրագները հանգած են։ Յերևի շուտով կգա հայրիկը։

ՍԸՐՄԱ.

Յե՞րբ պիտի գա։ Հոգիս ճմլվում ե։

ՍԻՐԱՆՈՒՇ.

Հանգստացիր, մայրիկ. հայրիկի իսլամանալով մենք չենք կորցնի նրան։

ՍԸՐՄԱ.

Կկորցնենք, աղջիկս, կկորցնենք նրան ընդմիշտ։

ՍԻՐԱՆՈՒՇ.

Իսլամանալով նա կկորչի միայն քրիստոնեության համար, վոչ մեզ համար։

ՍԸՐՄԱ.

Խորը չես մտածում, աղջիկս։

ՍԻՐԱՆՈՒՇ.

Մահվան շունչ է փչում այս բանից։

ՍԸՐՄԱ.

Մակուլկ չի՞ յերևում Վոսբորի վրա։ Տես։

ՍԻՐԱՆՈՒՇ.

(Դիտելով դուրսը) Վոչ, մայրիկ։

ՍԸՐՄԱ.

Միայն դիտենայի, վոր նա անվանական կերպով դավանափոխ է յեղել, իր քաղաքական կացությունը փրկելու համար միայն։

ՍԻՐԱՆՈՒՇ.

Վստահ յեղիր, մայր, նա ապտակել է հրեային իր կրոնի պաշտպանության համար։ Ուրեմն խորն է հավատքը նրա մեջ։

ՍԸՐՄԱ.

Ներս կանչիր Հակոբին։

ՍԻՐԱՆՈՒՇ.

(Դուրս)։

ՍԸՐՄԱ.

Փլչում է այս տունը։

(Ներս են մտնում Սիրանուշ յեվ Հակոբ)։

ՀԱԿՈԲ.

Ի՞նչ է կամենում հրամայել իմ տիրուհին։

ՍԸՐՄԱ.

Ի՞նչ լուր ամիրայից։

ՀԱԿՈԲ.

Ինչպես գիտեք՝ Շեյխ-Իլ-Իսլամի հետ մտել են Սարայ

և դեռ դուրս չեն յեկել։ Ուղարկել եմ ծառաներից մեկին տեսնելու համար, թե նա յերբ է դուրս գալու և ուր է գնալու։

ՍԸՐՄԱ.

Նոր լուր ստանալուդ՝ անմիջապես տեղեկացրու։

ՀԱԿՈԲ.

Շատ բարի, տիկին։

ՍԸՐՄԱ.

Մատուռում յեկեղեցու հետքեր չմնացին։

ՀԱԿՈԲ.

Ամեն ինչ վոչնչացված է, տիկին, գետինը և պատերը ծածկված են գորգերով և լուսամուտները բացված։

ՍԸՐՄԱ.

Յերբ ամիրան լուր է ուղարկել անհետացնել մատուռը, նշանակում է խուզարկություն կարող է լինել, հասկանում ես, Հակոբ։

ՀԱԿՈԲ.

Հասկանում եմ, տիկին, վստահ յեղեք, ամենաճարպիկ մարդն անգամ չի կարող յեկեղեցու հետք նշմարել այնտեղ։

ՍԸՐՄԱ.

Գնա, Հակոբ, և հավատարմությամբ հսկիր տանը։

ՀԱԿՈԲ.

Ինչպես վոր հրամայում է իմ տիրուհին (Դուրս)։

ՀԱԿՈԲ.

(Ներս) Պողոս Ամիրան, տիկին։

ՍԸՐՄԱ.

Ներս հրավիրիր։

ՀԱԿՈԲ.

(Դուրս)։

ՊՈՂՈՍ ԱՄԻՐԱ.

(Ներս մտնելով աչքերը շռում է մեկ Սըրմայի յեվ մեկ Սիրանուշի վրա) Մթթե ճշմարիտ է։

ՍԸՐՄԱ.

Ճշմարիտ է, ամիրա, դառնորեն ճշմարիտ։

ՊՈՂՈՍ ԱՄԻՐԱ.

Կորցնում եմ պարզ դատողությունս անդամ։ Ապտակել հրեային կրոնի համար և նույն գիշերը դավաճանել կրոնին։ Անհասկանալի յե։

ՀԱԿՈԲ.

(Ներս) Տիկին, Ամիրան Սարայից դուրս է յեկել Շեյխ-Իլ-Իսլամի հետ և սուլթանական կառքով գնացել է Այա Սոֆիա։

ՍԸՐՄԱ.

Վա՜խ...

ՀԱԿՈԲ.

(Դուրս)։

ՊՈՂՈՍ ԱՄԻՐԱ.

Ապշում եմ։

ՍԸՐՄԱ.

(Զայրացած) Տղամարդ եք դուք, կիսլամանաք բոլորդ էլ։

ՍԻՐԱՆՈՒՇ.

Հայրիկը Այա Սոֆիայում... (Լալիս է)։

ՀԱԿՈԲ.

(Ներս) Տիգրան ամիրան։

ՍԸՐՄԱ.

(Գլխով հավանության նշան է անում)։

ՀԱԿՈԲ.

(Դուրս)։

ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐԱ.

(Ներս) Այն, ինչ վոր իմ սեփական աչքերով տեսա, անհավատալի յեր—Հաջի Զելեբին, Յերկանյան Հովհաննես ամիրան, ապարոշով և իսլամական վերարկուով։

ՍԻՐԱՆՈՒՇ.

Ո՞ւր տեսաք դուք նրան, ամիրա։

ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐԱ.

Սուլթանական կառքով Այա Սոֆիայի վերելքը բարձրանալիս։

ՍԸՐՄԱ.

Ընշմարեց ձեզ, ամիրա։

ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐԱ.

Նշմարեց և ջղային շարժումներով սկսեց միրուքը շփել։

ՍԸՐՄԱ.

Բարևեցիք։

ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐԱ.

Վոչ։ Չհամարձակվեցի։

ՍԸՐՄԱ.

Ներեցեք, ամիրա, դուք ներկա եյիք աճուրդին։

ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐԱ.

Այո։ Հաջի Զելեբին մեզ քարոզում եր սառնասրտություն և քաջասրտություն, բայց ինքը կորցրեց իր քարոզած բոլոր առաքինությունները։ Մատուռի գաղտնիքի բացվելը անխուսափելի յեր, իսկ հրեային ապտակելը բոլորովին անտեղի։

ՍԻՐԱՆՈՒՇ.

Համբերությունը միայն կարող է բարկություն պարունակել իր մեջ, ամիրա։

ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐԱ.

Համբերությունը պարունակում է իր մեջ միայն իմաստություն։

ՍԻՐԱՆՈՒՇ.

Ցերբեք։ Համբերությունը բարկություն է դարբնում։

ՀԱԿՈԲ.

(Ներս) Ամիրան յեկավ սուլթանական կառքով։

(Բոլորը անձկագին սպասումի մեջ։ Մտնում է Հաջի Զելեբին իսլամական ապարոշով յեվ վերարկուով)։

ՍԸՐՄԱ.

Ճշմարիտ է, ճշմարիտ է։ Տէր, ներիր նրան։

ՍԻՐԱՆՈՒՇ.

(Վազում, գրկում է հորը յեվ համբուրվում)։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

(Համբուրում է յեվ կնոջը)։

ՍԻՐԱՆՈՒՇ.

Ի՞նչ անախորժ տարազ է այդ, հայր, կարծես գու չես։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

Արդյոք իմ տարազով միայն ինձ հայր եյիր ճանաչում, աղջիկս։ Չե՞ վոր յես կարող եյի քո գիտակցությունից առաջ ներկայանալ քեզ բոշայի տարազով կամ աֆրիկյան սեամորթների գույնով։

ՍԻՐԱՆՈՒՇ.

Կարևորը այն է, վոր այդ տարազի տակ, հայր, քո արյունը լինի կարմիր և հոգին՝ սպիտակ։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

(Ծիծաղելով յեվ լրջանալով յեվ կիտելով հոնքերը) Հոգի չկա, աղջիկս, միայն կիրքը գոյություն ունի մարդկային ներաշխարհում։ Կիրքը բնական է և հավիտենական։ Նա հանդես է գալիս մարդու մեջ զանազան ձևերով։ Կրոնը մարդկային կրքի մի դրսևորումն է։ Յես հարգում եմ կիրքը մարդու մեջ։ Զանա, վոր չկորցնես քո մարդկային արժանապատվությունը։ Արժանապատվությունն ել կիրք է։

ՍԻՐԱՆՈՒՇ.

Նախընտրելի յե բարի կիրք ունենալ։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

(Ծիծաղելով) Ո՞վ է համարձակվում սահմաններ ու չափեր վորոշել։ Բարի՞... հա՜-հա՜-հա՜։

ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐԱ.

Ի՞նչ պատահեց ձեզ, ամիրա։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

Վազինչ։

ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐԱ.

Ուրանալ Հռոմի տիեզերական յեկեղեցին...

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

Տիեզերական է միայն մարդը։

ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐԱ.

Ապա կրոնը։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

Կրոնը փուճ է, ամիրա։

ՍԸՐՄԱ.

Ներիր, սուրբ կույս Մարիամ։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

Ձեզ խանգարող չի լինի։ Դուք կշարունակեք հավատալ հորը, հոգուն և վորդուն։

ՊՈՂՈՍ ԱՄԻՐԱ.

Դու ինչ բանի յես հավատալու։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

Ինձ հավատալու ուրիշ բաներ կան, ամիրա, ինձ հարկավոր չե՞ քրիստոնեական յեկեղեցին և սուրբ սկիհը։ Յես ել կթքեմ սկիհի մեջ։

ՍԸՐՄԱ.

(Ինքնիրեն) Սուրբ կույս Մարիամ։

ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐԱ.

Քրիստոսի կրոնի ուրացումից հետո ի՞նչ է մնում մարդ արարածին։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

Քրիստոնեական կրոնի ուրացումից հետո մարդ արարածին մնում է աշխարհը իր վողջ բովանդակությամբ։

ՊՈՂՈՍ ԱՄԻՐԱ.

Հիվանդ է ամիրան։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Մնում է ինձ աշխարհը։ Սըրմա, պետք է ներես ինձ, վոր յես բաժանվում եմ քեզանից և բոլորից նոր ընտանիք կազմելու։ Կվոխեմ հարյուրավոր կրոններ մինչև պատժեմ սրիկաներին։ Տյուզյաններից հետո կարգը կհասներ և ինձ և բոլորին։ Ուրիշներն են ցանկանում տիրել, լավ է վոր յես տիրեմ։ Սուլթանի Սարայում յես համբուրեցի այն յերեսը, վորը առավոտ ապտակել էր։ Կհամբուրեմ հարյուրավոր ապտակած յերեսներ մինչև պատժեմ նրանց։ Ցանկանում են տիրել։ Յես եմ տիրելու։

ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐԱ.

Դա մարդկային սուրբ ցանկություն է։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Վսեմության չափեր չկան։ Միայն բառեր են դրանք։ Յես ուզում եմ իմ բարեկամին խրատել—միայն ապրել արժանապատվության գիտակցությամբ։ (*Սըրմային յեվ Սիրանուշին*)։ Յես բաժանվում եմ ձեզանից։ Ապրեցեք համաձայն ձեր ներքին ձայնի։ Յես կգնամ իմ ճանապարհը։

ՍԻՐԱՆՈՒՇ.

(*Փաղփաղվելով հորը, լաց է լինում*)։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Մի լաց լինիր, աղջիկս, յերգիր Սուրբ Կույս Մարիամի յերգը. հորդ գավանափոխությունը արգելք չե քո քրիստոնեական վերացումներին։

ՍԸՐՄԱ.

Միայն խոստացիր ամեն յերեկո մրմնջել քո տան մեջ սուրբ Կույս Մարիամի յերգը։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

(*Դժկամակելով, բայց կնոջը դուր գալու համար*) Լավ, շատ լավ։

ՍԸՐՄԱ.

Մենք չենք մոռանա քեզ։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

(*Լռությունից հետո*) Մատուռը անհետացած է։

ՍԻՐԱՆՈՒՇ.

Այո։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

(*Պողոս ամիրային*) Պիտի խնդրեյի քեզանից, վոր իմ ընտանիքը իր կաթոլիկ պաշտամունքը քո ապարանքի մատուռում կատարեր։

ՍԸՐՄԱ.

Բայց քանի վոր...

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Վստահ եմ, վոր իմ տան ներքին կյանքին պետք է հետևեն իմ թշնամիները։ Յեթե մի վորևե որ նորից մատուռ կառուցվի իմ տան մեջ՝ իմ թշնամիները դուրս կբերեն գաղտնիքը։ Այն ժամանակ յես չեմ կարողանա իբրև իսլամ պաշտպանել իմ տունը և կտանջվեմ։ Խնայեցեք ինձ, խնդրում եմ, այդ տանջանքը։

ՍԻՐԱՆՈՒՇ.

Մենք առանց մատուռի կարող ենք շարունակել մեր պաշտամունքը, քո քաղաքական կացությունը չվտանգելու համար։

ՀԱԿՈԲ.

(*Ներս*) Տյուզյանների մայրը ցանկանում է ձեզ տեսնել, տիկին։

ՍԸՐՄԱ.

Ներս հրավիրիր։

ՄԱՅՐԸ.

(*Ներս է մտնում սևվեր հագած*)։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

(*Մնում է զարմված իր տեղում*)։

ՄԱՅՐԸ.

(Տեսնելով Հաջի Զելեբուն) Ուրեմն ճշմարի՞տ է...

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Այո՛, մեծ տիկին։

ՄԱՅՐԸ.

Այդքան շուտ մոռացաք ձեր կրոնը, ամիրա, այն կրոնը, որ յերեկ ձեզ այդքան հերոսություն ներշնչեց։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Մեծ տիկին, ներեցեք ինձ։

ՄԱՅՐԸ.

Մարդիկ միայն իրենց դավանած կրոնով են տարբերվում իրարից։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Մարդկանց մեջ տարբերությունը դնողը արժանապատվությունն է, մեծ տիկին։

ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐԱ.

Ասա կիրքը։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Կիրքը, յեթե ուզում ես։ Ներեցեք ինձ, պետք է գնամ։ (Համբուրելով աղջկանը յեվ կնոջը) Մնացեք բարով, մնացեք բարով։

ՍԸՐՄԱ.

Վերջին անգամ աղոթիր մեզ հետ։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Աղոթել, յերբեք։ Այո՛, այո՛, յես խոստացա աղոթել ամեն յերեկո։

ՍԸՐՄԱ.

Մենք ցանկանում ենք, որ դու աղոթես մեզ հետ վերջին անգամ։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Կաղոթեմ, կաղոթեմ այս յերեկո։ Մնացեք բարով։ (Դուրս)։

ՍԻՐԱՆՈՒՇ.

(Լալիս է)։

ԲՈԼՈՐԸ.

(Լուռ են յեվ տխուր)։

ՍԸՐՄԱ.

(Ծունկ և չոքում, ձեռքերը կաթոլիկ ձևով կպցնում և իրար յեվ սկսում է յերգել «Վոլջույն քեզ, սուրբ կույս Մարիամ» յերգը)։

ԲՈԼՈՐԸ.

(Հետևվում են նրան ծունկ չոքելով յեվ միանալով յերգին)։

(Յերգը կիսատ վարագույրը իջնում է)։

Վ ՊԱՏԿԵՐ

Մի սենյակ Իսխելի տանը։ Մտնում են Իսխել յեվ Սիմխա։

ՍԻՄԽԱ.

Վերջապես տանը փակվելով վոչինչ ձեռք չես բերի։ Ի՞նչ ոգուտ տանը փակվելուց։ Դուրս գնա, մարդկանց տես։ Յեթե այս անգամ քո խելքը չի կարող ոգնել քեզ, ուրիշներին լսիր։

ԻՍԽԵԼ.

(Ատամները կրճտացնելով մռռում է)։

ՍԻՄԽԱ.

Յես յերբեք չեյի տեսել քեզ այսքան անարի և այսքան թուլասիրտ։

ԻՍԽԵԼ.

(Յածը ձայնով) Սպանեցեք ինձ, Սիմխա. ավելորդ է ինձ համար ապրելը։

ՍԻՄԽԱ.

Մինչև մարդկանց մեջ չերևաս, չեր վերադանի պայ-

ծառ դատողություն։ Գնա դուրս և քո առևտրով զբաղվիր. առևտուրը կմոռացնի քեզ թերևս ամեն բան։

ԻՍԽԵԼ.

Մոռանալ։ Միայն մահը կարող է մոռացնել, պայմանով, որ մահվանից հետո մարդիկ չզգան։ Մահվանից հետո յեթե մնում է մարդկային զգացումը, ելի չեմ մոռանա։ Ամոթը այրում է իմ ողջ եյությունը, Սիմխա։

ՍԻՄԽԱ.

Պետք է միաժամանակ մոռանալ ձևացնես և մտածես վրեժխնդրության մասին։

ԻՍԽԵԼ.

(Ինքնիրեն) Ապտակեց ինձ։ Արքունիքի ներկայացուցիչների առաջ ցեխի հավասարեցրեց։ Նա ինձ հետ խաղաց այնպես, ինչպես ամենալկի տերը չի խաղա իր շան հետ։ Թքեց իմ պատվի վրա։ Մրոտեց իմ ամբողջ ճակատը։ Տյուզյանների ողջ հարստության, փառավոր ապարանքի վաճառքի ողջ հաճույքը վարձատրեց մի ապտակով։ Ո՞ւմ դեմ եմ կռվելու հիմա։ Իսլամի դեմ։ Դա հրեայի բան չե։

ՍԻՄԽԱ.

Փողոցներից հանեցիր Հալետին և ապարանքների տեր դարձրիր. չի՞ կարող կռվել քո թշնամու դեմ։

ԻՍԽԵԼ.

Դու կարծում ես հնարավոր է նրա համար կռվել Հաջի Զելեբու դեմ։ Բյուզանդական կայսրության անկումից, ոսմանյան տիրապետության առաջին օրից մինչև հիմա Ստամբուլի մայթերի վրա նման խորամանկը ման չի եկել, Սիմխա, հասկացիր։ Դու կարծում ես Հալետը կարող է կռվել։ Սրանից հետո հարկավոր է ծախսել իմ հարստության ամենահետին փշուրը՝ պատժելու համար նրան, ինձ ապտակողին։

ՍԻՄԽԱ.

Մի ապտակի համար մի ամբողջ հարստությունն դու հիվանդ ես, քեզ բժիշկ է հարկավոր. մի ապտակի համար ողջ հարստությունը վատնի՞... Հա, հա, հա, Յեհովային աղոթիր։

ԻՍԽԵԼ.

Սուտ է Յեհովան։ Սինագոգներ շինող Իսխելը ապտակ կերավ մի կեղտոտ քրիստոնյայից, և Յեհովան լռեց։ Անիծված լինի Յեհովան էլ ու նրա...

ՍԻՄԽԱ.

(Ծչալով) Լռիր։

ԻՍԽԵԼ.

Չեմ լռի։ Սուտ է Յեհովան։ Սուտ է Մովսեսը։ Սուտ է տապանակ ուխտին։ Սուտ է ամեն ինչ։ Միայն ապտակները գոյություն ունին աշխարհում և բոլոր ապտակների մեջ միայն այն ապտակը, որ ապրում է իմ յերեսի վրա և վառվում, վառվում է իբրև ամոթ, վառվում է իբրև քրիստոնեության դատակնիք։ Կզոհեմ ամեն ինչ—քեզ, աղջիկս, բոլորը, մինչև չտեսնեմ ինձ ապտակողի արյունը Ստամբուլի հրապարակներից մեկում։

ՍԻՄԽԱ.

Յեթե դու քեզ կորցնես, վոչինչ չես կարող մտածել և վոչ մի վնաս էլ չես կարող հասցնել քո թշնամուն։

ԻՍԽԵԼ.

Իմ դատողությունը տեղն է, բայց ջղերս դավաճանում են ինձ։ Ի՞նչ կարող եմ անել իսլամի դեմ, սուլթանական վերարկու հագած մի իսլամի դեմ։

ՍԻՄԽԱ.

Դու յել իսլամացիր։

ԻՍԽԵԼ.

(Կանգ է առնում, մտածում է յեվ հանգիստ տոնով) Ո՞վ

կհավատա հրեա Իսխելին։ Վոչ։ Հավատալի չի լինի։ Իսխելի զենքերը ուրիշ տեսակ պետք է լինեն։

ՍԻՄԽԱ.

Ուրեմն Իսխելը կարող պետք է լինի ուրիշ զենքեր ստեղծել։

ԻՍԽԵԼ.

Իսխելը, կարող է ու... չի կարող։ Ամոթ քեզ, Իսխել, վոր մինչև հիմա չկարողացար դավաղրել, հազար ամոթ։ (Միրուքի թելերը քաշում է) Պետք է ստեղծեմ, ուրիշ հնար չկա։ (Յերթեվեկում է ու խորը մտածում) Հալեսը գնաց վոստիկանության մոտ խուզարկել տալու նրա ապարանքը։ Վոստիկանները հիմա կլինեն Հաջի Զելեբու ապարանքում. յեթե այնտեղ էլ մի մատուռ յերևան բերեն, Իսխել հրեան կհասնի իր նպատակին։

ՍԻՄԽԱ.

Ուրեմն սպասիր։

ԻՍԽԵԼ.

Յես սպասում եմ, բայց ջղերս, ջղերս կորցնում են ամեն կապ։ Դատապարտում եմ ինքս ինձ։ Մովսեսի դավակներից և վոչ մեկը այսպիսի թուլություն յերևան չի բերել։ Զիլը իմ առաքինությունն եր։ Կորցրի իմ առաքինությունը, Սիմխա։ (Բղավում է) Ապտակը, ապտակը, հեյ, ապտակեցին ինձ, ապտակեցին ինձ։ (Ավելի բարձր) Խեղդվում եմ, ամոթը ինձ խեղդում է։

(Անապարանքով յեվ զիշերային հագուստով մտնում է աղջիկը՝ Զիլֆան)։

ԶԻԼՖԱ.

Ի՞նչ կա։ Ի՞նչ է պատահել քեզ, հայր, ասա՛ ինձ, ի՞նչ է պատահել քեզ։

ԻՍԽԵԼ.

(Գազանային զոռոցով) Խեղդվում եմ, աղջիկս, խեղդում են ինձ։ Աչխարհը թքում է վրաս։ Ընկել եմ մարդկանց վոտների տակ, ա...ա...ա... սպանեցեք ինձ, փորեցեք աչքերս, վորպեսզի իրրև մարդ արև չտեսնեմ, թաղեցեք, վորպեսզի արևը ինձ չտեսնի։

(Սիմխա յեվ Զիլֆա գրկում են Իսխելին, շոյում են։ Իսխելը խեղդված ձայնով անհասկանալի բառեր է արտասանում յեվ կամաց-կամաց հանգստանում։ Իսխելին պառկեցնում են թախտի վրա)։

ԶԻԼՖԱ.

(Մորը) Ինձ պիտի ասես, թե ի՞նչ է պատահել հորս։

ՍԻՄԽԱ.

Վոչինչ չի պատահել, աղջիկս։

ԻՍԽԵԼ.

Ինձ հետ ամեն ինչ է պատահել, աղջիկս։ (Սիմխային) Պատմիր, պատմիր աղջկանս, թող իմանա ինձ հասցրած ամոթը։

ՍԻՄԽԱ.

Վաղը կպատմեմ, աղջիկս, հիմա սիրտ չունեմ։

ԻՍԽԵԼ.

Պատմիր, հիմա պատմիր։ Ուզում եմ, վոր հիմա պատմես։

ԶԻԼՖԱ.

(Ծունկի յեկած) Խնդրում եմ, մայր, աղաչում եմ քեզ։

ՍԻՄԽԱ.

Տյուզյան ամիրանների ապարանքի և կահկարասիների աճուրդի ժամանակ, Յերկանյան Հովհաննես ամիրան—Հաջի Զելեբին, սուլթանական ներկայացուցիչների առաջ, ապտակել է հորդ և նույն որն իսկ իսլամացել—ահա պատմությունը։

ԶԻԼՖԱ.

Յես կսպանեմ նրա աղջկան։

ԻՍԽԵԼ.

Նրա աղջկա մի սափոր արյունը չեմ փոխի հորը կես կաթիլ արյան հետ։

ԶԻԼՖԱ.

Աղջկա ժանը անհուն կսկիծ կխոցի հոր սիրտը։

ԻՍԽԵԼ.

Բայց չի հանգստացնի իմ սիրտը, Զիլֆա, իմ սիրտը։ Իմ սրտի հազեցումը, աղջիկս, դա յե հարցը։

ԶԻԼՖԱ.

Աղջկա սպանությամբ կընկճեմ հոր յեռանդը, հոգեկան ամբողջ ուժը, այն ժամանակ իմ հայրը ուժ կունենա նրա հետ կռվելու։

ԻՍԽԵԼ.

(Դատերիկ ծիծաղելով) Վորքան մեծ ե դժբախտությունը, այնքան մեծ ե Հաջի Զելեբու ուժը։

ԶԻԼՖԱ.

Ուրեմն հավիտյան մենք պետք ե կրենք այդ ամոթը։

ԻՍԽԵԼ.

Վորքան կրենք՝ այնքան ծանրանում ե։

ՍԻՄԽԱ.

Յես հավատում եմ, վոր դու մի հնար կգտնես նրան պատժելու։

ԻՍԽԵԼ.

Անցել են ժամերը արդեն, Սիմխա, և իմ բոլոր մտացած հնարները չքանում են ոճառի պղպջակների նման։

ԶԻԼՖԱ.

(Լալիս ե)։

ԻՍԽԵԼ.

Մի լաց լինիր, Զիլֆա, կորցրել եմ ջղերս, բայց դատողությունս դեռևս չի դավաճանում ինձ. դուք մի լաց լինեք։ Այս վիշտը միայն ինձ թողեք։

ԶԻԼՖԱ.

Յես գնում եմ։ (Անհապարում ե դուրս)։

ԻՍԽԵԼ.

(Վոտի կանգնելով բղավում ե) Զիլֆա, Զիլֆա, Զիլֆա... Կորցնում եմ իմ ընտանիքը, կորցնում եմ ապրելու բոլոր իմ իրավունքները։

ԶԻԼՖԱ.

(Ցնտ զալով) Հայր, այստեղ եմ։

ԻՍԽԵԼ.

Մնացիր այստեղ։ Մի գնա։

ՍԻՄԽԱ.

(Բազկատարած յեվ աչքերը վեր հառած) Յեհովա, Յեհովա, Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստվածը, լսիր ու գոռա ամպերի միջից, անիրավված ե այս աշխարհում քո ընտրյալ ցեղի լավագույն զավակը, քո անվան սինագոգներ կառուցող Իսխելը։

ԻՍԽԵԼ.

Մի աղոթիր, Սիմխա, յերկինքը չե, վոր պիտի հատուցանի այս վրեժը։ Աստված չե, վոր պիտի տնորինի, այլ այս աշխարհի մարդը՝ այս աշխարհում։

ՍԻՄԽԱ.

Այդ հավատքն ե, վոր այս տունը պիտի տանի աղետից աղետ։ Յեհովան ե միայն, վոր վրեժխնդիր պետք ե լինի։

ԻՍԽԵԼ.

Թող քո Յեհովաներին և Յեհովային։ Նա չկա, չի յեղել և չի լինելու։

ՍԻՄԽԱ.

Մարգարեները ասում են, վոր...

ԻՍԽԵԼ.

(Բղավում ե) Սպանում են ինձ. ա, հասեք, կախաղան են բարձրացնում իմ պատիվը։ Աղոթել և սպասել... Դա միայն Աստուծո ընտրյալ հիմարը կարող ե անել։ Հեռացիր այստեղից քո Յեհովայով միասին։

ՍԻՄԽԱ.

Ցեթե չես աղոթի, մտածի։ Կորցնում ես դու քեզ։

ԻՍԽԵԼ.

(Հանգստանալով) Դա ճիշտ է։ Պետք է մտածել։ Պետք է մտածել զոր ու զիշեր։

ՍԻՄԽԱ.

Փոխանակ մտածելու, ցնդած ծերունի, այնպիսի աղաղակներ բարձրացրիր, վոր յերիտասարդ աղջիկս անգամ իմացավ։

ԻՍԽԵԼ.

Թող իմանա։ Հոր հանդեպ յեղած անարգանքը պետք է իմանա և պարտավոր է տանջվել դրա համար։

ՍԻՄԽԱ.

Ե՛հ, ցնդել ես դու։ Վերջ ի վերջո ամբողջ յեղածը մի ապտակ է։

ԻՍԽԵԼ.

Կին ես և կարող ես տանել։

ՍԻՄԽԱ.

(Ընդամարնական շարժ ու ձեվեր)։

ԻՍԽԵԼ.

Սիմխա, մեծահարուստ հրեա Իսխելի կինը, պատրաստվիր աղքատության, պատրաստվիր ուրիշների դռներին լվացք անել ապրելու համար, վորովհետև մեծահարուստ հրեա Իսխելը պիտի վատնի բոլոր հարստությունը իր թշնամու մի կաթիլ արյունը տեսնելու համար։

ՍԻՄԽԱ.

Պետք է ավելի և ավելի հարստանաս կռվելու համար։

ԻՍԽԵԼ.

Պատրաստվիր աղքատության, մեծահարուստ հրեա Իսխելի կինը։

ՍԻՄԽԱ.

Ցես միջոցներ ունեմ ապրելու, ուրիշների դռներին լվացք անելու կարիք չունեմ։

ԻՍԽԵԼ.

Այո՛, գիտեմ, կին ես դու և կարող ես ծախել սիրուն աղջիկդ։

ԶԻԼՖԱ.

Հայրը...

ՍԻՄԽԱ.

Մտածիր, մտածիր, մտածիր։

ԻՍԽԵԼ.

(Խորասուզվում է, աչքերը չռած տախտակամածին) Մի կողմից պետք է բարեկամանամ իմ թշնամու հետ, մյուս կողմից իմ ամբողջ հարստությամբ կաշառքներ բաժանեմ իսլամ մեծամեծներին, մինչև գտնեմ իմ թշնամուն դատապարտելու մի փոքրիկ առիթ։ Կաշառքը հիմքն է այս կայսրության։ (Ինքնիրեն) Իսխել, հավաքիր քո բոլոր ուժը, յերկրպագիր, կռացիր ներքին անշիջելի ատելությամբ, ժպտիր արտաքուստ, իսկ ներքուստ դիզիր դեզին մաղձ։

ՍԻՄԽԱ.

Ժամանակը կմոռացնի ամեն ինչ։

ԻՍԽԵԼ.

Ժամանակը անգութ կերպով բոցավառում է անպատված լինելու զգացումը։ Խարույկի նման, նման անշիջելի մորենուն, վառվում է ապտակը իմ հոգու մեջ։

(Ներս է մտնում Հալետը. Սիմխա յեվ Զիլֆա քաշվում են վարագույրի յետեվ)։

ՀԱԼԵՏ.

Սպասում եյի քեզ, Իսխել։

ԻՍԽԵԼ.

Ցերանի ինձ հանդիպելիք գերեզմանում։

ՀԱԼԵՏ.

Առաջ ինձ զարմացնում էիր դու, Իսխել, քո սառնասրտությամբ և համբերությամբ, իսկ հիմա դու ինձ զարմացնում ես քո տաքարյունությամբ և անհամբերությամբ։

ԻՍԽԵԼ.

Զեյի ցանկանա յերբեք, վոր իմ բարեկամ Հալետ եֆենդին ապտակվեր, բայց յեթե ապտակվեր, այդպես չեր խոսի։

ՀԱԼԵՏ.

Յես թույլ չեմ տա Հաջի Զելեբուն, վոր հեշտությամբ և անպատիժ մարսի ապտակը։

ԻՍԽԵԼ.

(*Ուրախացած*) Ուզում եմ նորից լսել այդ խոսքերը։

ՀԱԼԵՏ.

Մարգարեն վկա, յես կսպանեմ նրան, թեկուզ իմ գլուխն էլ կորցնեմ նրա գլուխից հետո։

ԻՍԽԵԼ.

(*Ընկնելով Հալետի վոտները՝ սկսում է կոշիկները լիզել*)։

ՀԱԼԵՏ.

Յես նրան կպատժեմ հանձն առնելով իմ սեփական մահը։ Միայն մի բան եմ պահանջում, Իսխել, վորը դու հանձն պիտի առնես ինձ չվտանգելու համար։ Քե վոր ինձ ժամանակ է պետք վրեժխնդրության համար։

ԻՍԽԵԼ.

Կանեմ ինչ վոր կհրամայես։

ՀԱԼԵՏ.

Արտասահմանից գալիք ոսմանյան կեղծ վոսկին պետք է գա քո անունով։ Յեթե իմ անունով բռնեն, դու ինձ չես կարող ոգնության հասնել, իսկ յեթե քո անունով բռնեն, յես կարող եմ քեզ ազատել։

ԻՍԽԵԼ.

Պատրաստ եմ, միայն փոխարենը պահանջում եմ Հաջի Զելեբու գլուխը։

ՀԱԼԵՏ.

Յերկրորդ անգամ յերդվում եմ մարգարեյի անունով։

ԻՍԽԵԼ.

Հավատում եմ։

ՍԻՄԽԱ.

(*Դուրս գալով վարազույրի յետեվից յեվ յերեսը շուռտալով դեպի պատը՝ իսլամական որենքի համաձայն*) Ներեցեք, Հալետ եֆենդի, դուք վտանգում եք իմ ամուսնուն։

ԻՍԽԵԼ.

(*Բղավում է*) Լռիր։ Քո գործը չե տղամարդկանց գործին խառնվել։ Հեռացիր այստեղից։

ՀԱԼԵՏ.

Սպասիր, Իսխել, յես ուզում եմ հասկացնել քո կնոջը, վոր այս բոլորը անում եմ իր ամուսնու պատվի համար։ Ինձ ապտակող չի յեղել, ապտակողը հիմա իմ իսլամ յեղբայրակիցն է. մի մոռանա, վոր մարգարեն հրամայում է համբուրվել նրա հետ։ Ինչ էլ վոր պատահի, յես և նա պետք է բազմենք ջեննեթի մեջ։ Կրկնում եմ՝ այս բոլորը անում եմ յես իմ բարեկամ Իսխելի պատիվը փրկելու համար։

ՍԻՄԽԱ.

Թող ապտակը անվրեժ մնա և թող չվտանգվի իմ ամուսինը։ Շուտով կմոռանա նա ապտակը, իսկ յեթե բռնվեն վոսկիները, դժվար թե Հալետ եֆենդին կարողանա ազատել հրեա մաքսանենգին։

ԻՍԽԵԼ.

Լռիր և դուրս գնա այստեղից։ Աշխարհը պետք է փուլ գա, վոր յես լսեմ կինարմատի խրատներին։ Դուրս։

(*Քաշքշում է Սիմխային յեվ դուրս անում*)։

ՍԻՄԽԱ.

(*Քաշքշուսի ժամանակ բղավում է*) Լռիր իմ խրատին։ Աղետալի յե այս, աղետալի։

ԻՍԽԵԼ.

(Մոտենալով Հալետին) Կանայք յերջանիկ են, յերբ անպատվվում են, Հալետ եֆենդի, ուշք մի դարձնեք, ապաչում եմ։

ՀԱԼԵՏ.

Դու իմանում եյիր, վոր նա պահված եր վարագույրի յետև։ Վատնգավոր են կանայք, յերբ գաղտնիք են իմանում։

ԻՍԽԵԼ.

Զեյի իմանում, Հալետ եֆենդի։ Յես կխեղդեմ նրան, յեթե համարձակվի չլռել այդ մասին։

ՀԱԼԵՏ.

Այնուամենայնիվ վատնգավոր ե կինը։

ԻՍԽԵԼ.

Հրեա կանայք խոսում են, տեր իմ, բայց նրանք չեն գործի իրենց ամուսինների դեմ։

ՀԱԼԵՏ.

Պետք ե զգուշ լինես, Իսխել, յես իսլամ եմ, վատնգը միայն կարող ե քեզ պատահել։

ԻՍԽԵԼ.

Անհոգ յեղիր, Հալետ եֆենդի, գաղտնիքը ավելի խորացավ, քանի վոր կինս իմացավ։

ՀԱԼԵՏ.

Յես գնում եմ։ Կկարգադրեմ, վոր վոսկիները ուղարկեն քո անվան։ Կվարձատրեմ քեզ դրա համար։

ԻՍԽԵԼ.

(Համբուրելով Հալետի վերարկույի քղանցքները) Վոսկիները կստանամ և կհանձնեմ ձեզ, իսկ դուք ստացեք զլուխը և հանձնեցեք ինձ։

ՀԱԼԵՏ.

(Դուրս)։

ԻՍԽԵԼ.

(Սենյակի դռան շեմքին կանգնած, ներվային արագությամբ շոյելով միրուքը) Վոսկիների փոխարեն կստանամ զլուխը։

Վ Ա Տ Կ Ե Ր

Սըրմայի առանձնասենյակը

ՍԸՐՄԱ.

(Ծունկ չոքած սեղանի վրա դրված մի փոքրիկ խաչելության արձանի առաջ՝ աղոթում ե)։

ՊԱՌԱՎ ԴԱՅԱԿ.

(Ներս ե մտնում յեվ տեսնելով, վոր Սըրման աղոթում ե՝ լուռ յեվ աննշմար քաշվում ե դուրս)։

ՍԸՐՄԱ.

(Վերջացնելով աղոթքը՝ վոտի յե կանգնում յեվ գնում, նստում ե թախտի վրա)։

ՊԱՌԱՎ ԴԱՅԱԿ.

(Ելի ներս ե մտնում) Զարմանալի լուր ունեմ քեզ հաղորդելու, տիկին։

ՍԸՐՄԱ.

Զարմանալի։

ՊԱՌԱՎ ԴԱՅԱԿ.

Այսոր քեզ այցելության պիտի գա Հաջի Զելեբու կինը—Նազմիյե հանըմը։

ՍԸՐՄԱ.

Վորքան պառավում ես, այնքան ավելի սիրում ես կատակներ անել, պառավ։

ՊԱՌԱՎ ԴԱՅԱԿ.

Կատակ չեմ անում, տիկին, այդպիսի բանի համար

կատակ չեն անի։ Գալիս է նա։ Հաջի Զելեբու ծառան քիչ առաջ լուր բերեց։

ՍԸՐՄԱ.

Լուրը ո՞վ եր ուղարկել, ամիրա՞ն թե կինը։

ՊԱՌԱՎ ԴԱՅԱԿ.

Ամիրան, տիկին։

ՍԸՐՄԱ.

Ա՜հ, ինչքա՜ն եմ կարոտել նրան։

ՊԱՌԱՎ ԴԱՅԱԿ.

Իզուր ինձ չլսեցիր, տիկին։ Ամբողջ քառասուն տարի ապրել եմ յես այս տանը, դու, այս տունը գալուց հետո, լսել ես իմ բոլոր խոսքերը, բայց այս վերջինը չլսեցիր։ Ամիրայի իսլամությունից հետո դու ես կարող եյիր իսլամանալ, փրկելով ամիրայի հոգեկան ծանր կացությունը։ Յես տեղյակ եմ նրա խորը սիրույն դեպի քեզ և իր զավակը։ Դու կփրկեյիր մանավանդ նրա հոգեկան կացությունը, պատճառ լինելով. վոր նա կրկին չամուսնանա։

ՍԸՐՄԱ.

Ապա իմ հոգին, պառա՞վ։

ՊԱՌԱՎ ԴԱՅԱԿ.

Թույլ տուր ինձ ասելու, վոր մտածելով քո հոգու մասին՝ կորցրիր քո սերը։ Սերը, տիկին, հիմք է ամեն բանի։ Բարություն կարող եյիր անել մինչև անգամ չդավանելով վո՛չ մեկին և վո՛չ ել մյուսին. բարությունը կրոնի հետ կապված առաքինություն չե։ Մեզ համար հնարավորություն չկա տեղեկանալու ամիրայի ներքին կյանքին, բայց յես գուշակում եմ, թե նա ամեն յերեկո արցունքներով և անցկացնում իր կյանքը։

ՍԸՐՄԱ.

Ասում են, վո՛չ մի տեղ չի գնում, բացի իր պաշտոնատեղից։

ՊԱՌԱՎ ԴԱՅԱԿ.

Դու կարծում ես, վոր նա կմեռնի իր բնական մահով։

ՍԸՐՄԱ.

(Հալիս է)։

ՊԱՍԱՎ ԴԱՅԱԿ.

Նրա իմաստությունը և նրա հոգեկան ուժը, իհարկե, դեռևս յերկար կարող են նրան պահել հավասարակշռության մեջ, բայց վերջ ի վերջո... Սխալ արիր դու, տիկին, իմ սպիտակ մազերը ինձ համարձակություն են տալիս ասելու այս առանց ծածկելու։ Սխալ արիր, վոր չիսլամացար։ Իհարկե, ամիրան այդ յերբեք չեր խնդրի, չեր առաջարկի, բայց յես ասացի քեզ ժամանակին։ Կրոնի հանդեպ յեղած անարգանքի համար հրեային ապտակելուց հետո՝ նրա քաղաքական կացությունը ուրիշ կերպ չեր փրկվի։ Պետք եր իսլամանալ։ Իսլամացավ։

ՍԸՐՄԱ.

Այդ բոլորը ճիշտ է, բայց յես չեյի դավաճանի իմ կրոնին։

ՊԱՌԱՎ ԴԱՅԱԿ.

Ասենք դրա մասին մտածելու կարիք չկա։ Արդեն ուշ է ամեն ինչ, միայն ուրախ յերևա պստիկ տիրուհու առաջ, վորպեսզի նա գնա և պատմի ամիրային։ Ամիրան ուղարկում է նրան, յես հավատում եմ, միայն այս տան տրամադրությունը շոշափելու համար։

ՍԸՐՄԱ.

Յեթե դա ուրախություն կարող է պատճառել նրան՝ յես սպիտակ քողերի մեջ կծածկեմ իմ վիշտը։

ՊԱՌԱՎ ԴԱՅԱԿ.

Ծածկիր, տիկին, թաղիր քո վիշտը ինչքան խորը կարող ես։

ՍԸՐՄԱ.

Գնա, պառավ, և կարգադրիր, որ հարկ յեղած պատիվներով ընդունեն նրան։

ՊԱՌԱՎ ԴԱՅԱԿ.

Այս առանձնասենյակումն ես ընդունելու նրան։

ՍԸՐՄԱ.

Այո, այստեղ։

ՊԱՌԱՎ ԴԱՅԱԿ.

(Դուրս)։

ՍԸՐՄԱ.

(Վոտի յեկ կանգնում, լուսամուտից դիտում է դուրս, հառաչում է)։

ՍՊԱՍՈՒՀԻ.

(Ներս) Ընդունելության վոր զգեստն եք հրամայում, տիկին։

ՍԸՐՄԱ.

Վոչ մեկը։

ՍՊԱՍՈՒՀԻ.

(Խոնարհվելով քաշվում է դուրս)։

ՍԸՐՄԱ.

Սպասիր, աղջիկս։

ՍՊԱՍՈՒՀԻ.

(Ներս)։

ՍԸՐՄԱ.

Կանչիր այստեղ Սիրանուշին։

ՍՊԱՍՈՒՀԻ.

(Դուրս)։

ՍԸՐՄԱ.

(Բարձի վրա դրված մի գիրք է քաց անում յեվ սկսում է կարդալ)։

ՍԻՐԱՆՈՒՇ.

(Մտնում է, պառավ Դայակը յետևից)։

ՍԸՐՄԱ.

Սպասում եյի քեզ, աղջիկս։

ՍԻՐԱՆՈՒՇ.

Ճիշտ է, մայրիկ։

ՍԸՐՄԱ.

Այո, ճիշտ է։

ՍԻՐԱՆՈՒՇ.

Ցերը է գալու։

ՊԱՌԱՎ ԴԱՅԱԿ.

Ամեն բոպե սպասում ենք։

ՍԻՐԱՆՈՒՇ.

Ինչքան ցանկանում եմ տեսնել հայրիկի կնոջը։

ՍԸՐՄԱ.

(Հառաչում է յեվ աչքերի արցունքները ցույց չտալու համար՝ յերեսը շուռ է տալիս)։

ՍԻՐԱՆՈՒՇ.

Անպայման գեղեցիկ կլինի։

ՊԱՌԱՎ ԴԱՅԱԿ.

(Նշան է անում Սիրանուշին լռել յեվ զաղտնի ցույց է տալիս մորը)։

ՍԻՐԱՆՈՒՇ.

(Գլուխը կախում է յեվ զղջում է իր ասածների համար)։

ՍԸՐՄԱ.

Գնա, պառավ, ուշադրություն դարձրու, որ լավ ընդունվի ամիրայի կինը մեր ապարանքում։

ՊԱՌԱՎ ԴԱՅԱԿ.

Շատ բարի, տիկին։ Դու անպայման այստեղ մնա, Սիրանուշ, մայրիկիդ մոտ (Դուրս)։

ՍԻՐԱՆՈՒՇ.

Այո, յես չեմ հեռանա։ (Գնում է յեվ փաթաթվում մոր վիզը)։

ՍԸՐՄԱ.

(Արցունքների մ'իջից) Ինձ մնացել ես միայն դու (Համբուրում է):

ՍՊԱՍՈՒՀԻ.

(Ներս) Պատիկ խաթունը յեկավ։

ՍԻՐԱՆՈՒՇ.

(Վոտի յե կանգնում)։

ՍԸՐՄԱ.

(Թաշկինակով սրբում է աչքերը յեվ ակամա ուրախ տրամադրություն է ստանում):

ՆԱԶՄԻՅԵ.

(Պառավի հետ ներս է մտնում խալամական շաբասավով։ Քողերի տակից տեսնելով, վոր տղամարդ չկա, բաց է անում յերեսը յեվ մոտենալով Սըրմա խաթունին՝ չոքում է առաջը)։

ՍԸՐՄԱ.

(Համբուրում է ճակատը):

ՍԻՐԱՆՈՒՇ.

(Մոտենում է Նազմիյեին յեվ համբուրվում են):

ՆԱԶՄԻՅԵ.

Վողջույններ եմ բերել Հաջի Զելեբուց ձեզ, մեծ խաթուն, և իր աղջկան։

ՍԸՐՄԱ.

Ապրի ուղարկողը և ապրի բերողը։ Ի՞նչպես է ամիրայի առողջությունը։

ՆԱԶՄԻՅԵ.

Շատ լավ, մեծ խաթուն, միայն տանջվում է ձեզ չտեսնելով։

ՍԻՐԱՆՈՒՇ.

Հայրիկս...

ՍԸՐՄԱ.

Բարձրացեք ինձ մոտ, պատիկ խաթուն, և պատմեցեք թե՝ ինչպես է անցկացնում ամիրան իր որերը։

ՍԻՐԱՆՈՒՇ.

(Բարձրացնում է Նազմիյեին յեվ նստեցնում է թախտի վրա):

ՍՊԱՍՈՒՀԻ.

(Մետաքսե բարձիկներ է շարում Նազմիյեի շուրջը):

ՆԱԶՄԻՅԵ.

Զելեբին ապրում է բոլորովին քաշված կյանքով։ Ամեն որ յերկու ժամով գնում է մաքսատուն և ուղիղ վերադառնում տուն։ Հյուրեր չի ընդունում և վոչ վոքի մոտ հյուր չի գնում։ Տանը զբաղված է մեր փոքրիկ պարտեզի ծաղիկների հոգատարությամբ։

ՍԸՐՄԱ.

Ա՜, չի՞ մոռացել ամիրան ծաղիկները։

ՆԱԶՄԻՅԵ.

Վո՛չ, մեծ խաթուն, անհուն սիրով խնամում է ծաղիկները։

ՍԸՐՄԱ.

(Պառավին) Ուղարկել տուր ամիրային իր սիրած բոլոր ծաղիկները։

ՊԱՌԱՎ ԴԱՅԱԿ.

Շատ բարի, տիկին։

ՆԱԶՄԻՅԵ.

Կարդում է ինչ վոր հին, փոշոտած գրքեր։ Խոսում է այս տան մասին իբրև հին, անցած բանի մասին։

ՍԻՐԱՆՈՒՇ.

Առավոտները յե՞բբ է զարթնում հայրիկը։

ՆԱԶՄԻՅԵ.

Շատ վաղ։

ՍԻՐԱՆՈՒՇ.

Իսկ յերեկոները յէրբ ե անկողին մտնում։

ՆԱԶՄԻՅԵ.

Շատ ուշ։ (Սպասումին արծաթե ափսեի վրա բերում ե թրքական կոֆե յեվ հրամցնում ե նախ Նազմիյեին)։ Տվեք մեծ խաթունին։ Համեցեք, մեծ խաթուն (Վոտի յե կանգնում)։

ՍԸՐՄԱ.

Համեցեք, համեցեք, դուք իմ տանն եք։

ՆԱԶՄԻՅԵ.

Մի ամաչեցնեք ինձ, մեծ խաթուն։

ՍԸՐՄԱ.

(Առնում ե մի բաժակ յեվ տալիս ե Նազմիյեին)։

ՆԱԶՄԻՅԵ.

(Առնում ե բաժակը խոնարհությամբ դնում ե կողքին յեվ մի բաժակ ել առնելով ափսեյից՝ տալիս ե Սըրմա խաթունին)։

ՍԸՐՄԱ.

(Առնելով բաժակը) Ապրեք։

ՍԻՐԱՆՈՒՇ.

Դու սիրում ես հայրիկին։

ՆԱԶՄԻՅԵ.

Անսահման սիրով։

ՍԸՐՄԱ.

(Կիտում ե հոնքերը զգուշանալով նշմարելի չդարձնել Նազմիյեին)։ Ասացեք, պստիկ խաթուն, ամիրայի գլխին կան ճերմակ մազեր։

ՆԱԶՄԻՅԵ.

Հազիվ մի քանի հատ, մեծ խաթուն։

ՍԻՐԱՆՈՒՇ.

(Անհոգ ուշադրությամբ հետեվում ե նրա բոլոր շարժումներին)։

ՍԸՐՄԱ.

Ամիրան այս տան մեջ յերբեմն տառապում եր հոդացավից։ Ինչպես ե զգում իրեն հիմա։

ՆԱԶՄԻՅԵ.

Գարնան անձրևների ժամանակ մի քիչ զգալի յեղավ։ Մոռացա ասելու, վոր Զելեբին խնդրեց ուղարկել իրեն իր հոր նարգիլեն։

ՍԸՐՄԱ.

(Ուզում ե խոսել)։

ՊԱՌԱՎ ԴԱՅԱԿ.

Իսկույն, պստիկ խաթուն, վոչ վոք չի զործածել։ Իր գնալու որից փաթաթված դրված ե պահարանում։

ՆԱԶՄԻՅԵ.

(Ուշադրությամբ նայելով Սիրանուշին) Ինչ նման ե հորը։ Ասված ձեզ պարգևի, մեծ խաթուն (Ելի Սիրանուշին դառնալով յեվ վոտի կանգնելով) Ինչ հասակ, նման հորը հասակին, ինչ աչքեր, նման հորը աչքերին։ (Լռություն) Ուշացա։ Գնաք ե գնամ։ Զելեբին հիմա յեկած կլինի։

ՍԸՐՄԱ.

Սպասեք, պստիկ խաթուն, մի քիչ ել սպասեք։ (Պառավին) Բեր այստեղ իմ փոքրիկ սնդուկը։

ՊԱՌԱՎ.

Շատ բարի (Դուրս)։

ՍԸՐՄԱ.

Ամիրայի կյանքի յերջանկությունը ձեզանից ե կախված, պստիկ խաթուն։ Մենք բոլորս խնդրում ենք

ձեզանից վոչինչ չխնայել նրա յերջանկության համար։

ՆԱԶՄԻՅԵ.

Ձեր ցանկությունը իմ եվ ցանկությունն է։

ՍԸՐՄԱ.

Ապրեք։

ՆԱԶՄԻՅԵ.

(Պատի վրա նշմարելով մի նկար) Ա՜հ, այս նկարը յերևի Հաջի Զելեբու յերիտասարդության նկարն է։

ՍԸՐՄԱ.

(Խորը հառաչելով) Այո։

ՆԱԶՄԻՅԵ.

(Յերկար յեվ հափշտակված նայում է նկարին)։

ՍԸՐՄԱ.

Այդ նկարում Զելեբին քսան և հինգ տարեկան է։

ՆԱԶՄԻՅԵ.

Ինչքան կցանկանայի տեսնել նրան յերիտասարդ։

ՍԸՐՄԱ.

Քառասուն և հինգը անց չե ամիրան, պատիկ խաթուն։

ՆԱԶՄԻՅԵ.

Բայց նրա ճակատի վրա շատ կյանք և շատ տանջանք կա։

ՍԸՐՄԱ.

Աշխատել է իր վողջ կյանքում։

ՊԱՌԱՎ ԴԱՅԱԿ.

(Ներս է մտնում փոքրիկ անդուկով յեվ դնում է Սըրմայի առաջ)։

ՍԸՐՄԱ.

(Բաց անելով՝ միջից վերցնում է մարգարիտների մի շարոց) Ամիրան այս շարոցը ինձ նվիրել է յերբ մենք նշանված եյինք։ Նվիրում եմ ձեզ (Կախում է նրա վզից)։

ՆԱԶՄԻՅԵ.

Շնորհակալ եմ, մեծ խաթուն։

ՍԸՐՄԱ.

(Դուրս բերելով յերկու ադամանդյա մատանիներ) Պահում եյի այդ յերկու ադամանդյա մատանիները ապագա իմ հարսի մատը անցկացնելու համար։ Հիմա անց եմ կացնում քո մատներին։ (Անց է կացնում Նազմիյեի մատներին)։

ՆԱԶՄԻՅԵ.

Շնորհակալ եմ, մեծ խաթուն։ Յերբ դուք հարս ունենաք, այս մատանիները յես կանցկացնեմ նրա մատներին։

ՍԸՐՄԱ.

(Հանելով մի վոսկյա ժամացույց) Այս ժամացույցը ամիրայինն է. պահիր։

ՆԱԶՄԻՅԵ.

(Առնելով ժամացույցը՝ համբուրում է)։

ՍԸՐՄԱ.

(Մեղուկից մի ուրիշ բան դուրս բերելիս)։

ՆԱԶՄԻՅԵ.

Բավական է, մեծ խաթուն։

ՍԸՐՄԱ.

(Առանց ուշադրություն դարձնելու նրա խոսքերին) Այս ադամանդյա ասեղը գործածիր քո սև, սիրուն մազերի համար։ Իմն է։

ՆԱԶՄԻՅԵ.

(Համբուրում է լուռ Սըրմա խաթունի ձեռքերը)։

ՍԸՐՄԱ.

Բարևիր ամիրային և ասա նրան, վոր մենք բոլորս եվ կաղոթենք նրա առողջության համար։ Ասա, վոր հանգիստ և յերջանիկ ենք, վոր նա առողջ է։ (Արցունքները հազիվ է կարողանում զսպել)։

ՍԻՐԱՆՈՒՇ.

(Համբուրելով նրան յեվ լաց լինելով) Համբուրիր հայրիկին։

ՊԱՌԱՎ ԴԱՅԱԿ.

Բարեւիր ամիրային։ Ասա, վոր պառավ դայակը չի մոռացել իրեն։ Աստված պահպանի նրա թանկագին կյանքը։

ՆԱԶՄԻՅԵ.

Մնացեք բարով։ (Դուրս)։

ՍԻՐԱՆՈՒՇ.

(Գնում է նրա հետ դուրս)։

ՍՐԲՄԱ.

(Ցերկար լռությունից հետո) Ի՞նչ լավ աղջիկ է ամիրայի կինը։ (Ուզում է շարունակել, բայց արցունքները խեղդում են նրան, սկսում է դառնապես արտասվել)։

VI ՊԱՏԿԵՐ

Ստամբոլի քարափի վրա գետեղված ոսմանյան մնաքատունը։ Մաքատան խոշոր դուռը բացվում է խորքում, դռնից յերեվում է ծովը։

ՄԱՔՍԱՏԱՆ ԿԱՐԴԱԴՐԻՉ.

(Բեռնակիրներին) Խտացրեք ապրանքները, նավը հիմա կհասնի և շատ ապրանք է բերում։

(Բեռնակիրներն սկսում են ապրանքները խտացնել յեվ խոսակցել)։

Ա. ԲԵՌՆԱԿԻՐ.

Հեյ, հեյ, ասում եյին Վանում, վոր Ստամբոլի մեջ ավանակությունից տարբեր բան չենք անելու։

Բ. ԲԵՌՆԱԿԻՐ.

Ել չեմ կենա ես քաղաքում, ես ձմեռս կգնամ հայրենիք։

Գ. ԲԵՌՆԱԿԻՐ.

Ի՞նչ ես տանում հետդ։ Փող ավելացրիր։

Բ. ԲԵՌՆԱԿԻՐ.

Հետս տանում եմ մեջքի հիվանդություն, բոլ հաղ ու բաղամ։

Ա. ԲԵՌՆԱԿԻՐ.

Թանկագին բաներ ես տանում, դրանք հայրենիքում շատ հազվագյուտ են։

Բ. ԲԵՌՆԱԿԻՐ.

Գնամ հայրենիք, վոր ասեն թե՝ բողաչան ի՞նչ է, չեմ իմանա. հինգ տարի Ստամբոլի մեջ ապրեցա՝ բողաչայի համը չտեսա։

Ա. ԲԵՌՆԱԿԻՐ.

Հայ գիտի Վարագա վանք, ջրիդ մատաղ, քո զորությամբ յես կհասնեմ հայրենիք։

Բ. ԲԵՌՆԱԿԻՐ.

Մշու սուրբ Կարապետ իր զորությունը կորցուց, Վարագա վանքը ուժ ունի։ Բուհ, փուճ է։ Ցնդեց բոլորը։ Ստամբոլի համար սուրբ չկա։

Գ. ԲԵՌՆԱԿԻՐ.

(Մի ծալը հակի տակից) Ստամբոլի սրբերը քածերն են, վայ յես նրանց (նետելով հակը) տոպիկներին մեռնեմ։

Ա. ԲԵՌՆԱԿԻՐ.

Դրա համար փարա չուղարկեցիր հայրենիք։

Գ. ԲԵՌՆԱԿԻՐ.

Ո՞ւմ ուղարկեմ, հոբս—մի կին ունի, թող վաստակի, ուտի։ Մեծ աղբոբս. հա, փարա ուղարկեմ, վոր կնկանը ծոցը պառկի, քեֆ անի։ Ցես ել Ստամբոլի խանների մեջ փճանամ։ Հեյ, խելքդ ուր է, կանչի, տուն գա։

Բ. ԲԵՌՆԱԿԻՐ.

Նրա խելքը են գլխից ուրիշի տանն է ապրում. ինչքան կանչի՝ մեկ է, չի գա։

Գ. ԲԵՌՆԱԿԻՐ.

Մի կնիկ տար հեռդ։

Ա. ԲԵՌՆԱԿԻՐ.

Մի քյամբախը կա տանը, հերիք է։

Գ. ԲԵՌՆԱԿԻՐ.

Մի հատ էլ տար. ավել միսը աչք չի ծակի։ (Նավի տուլոց է լսվում շատ հեռվից)։

ԿԱՐԳԱԴՐԻՋ.

Շուտ արեք, նավը գալիս է. զավզակություն եք անում։

Գ. ԲԵՌՆԱԿԻՐ.

Զավզակությամբ ենք ապրում, թե չե ձեր աված փողը ինչքան է։

ԿԱՐԳԱԴՐԻՋ.

Դա յել շատ է։

Բ. ԲԵՌՆԱԿԻՐ.

(Քաշում է քոռնցքը) Շատ մի զրուցե, թե չե ես սնաթին հոր հոգուդ...

Ա. ԲԵՌՆԱԿԻՐ.

Ձեռք քաշի։ Բան չունեմ։

Բ. ԲԵՌՆԱԿԻՐ.

Ասենք զրուստ է, ինչ բան ունեմ...

ԻՍԽԵԼ.

(Ներս) Հաջի Զելեբին յեկել է։

ԿԱՐԳԱԴՐԻՋ.

Դեռևս վոչ։

ԻՍԽԵԼ.

Այս գալիք նավի վրա մի քանի արկղներ ունեմ։ Դրա մասին ուզում էյի քեզ հետ խոսել։

ԿԱՐԳԱԴՐԻՋ.

Առանց վերատեսչի չենք դարսելու գալիք նավի ապրանքները։

ԻՍԽԵԼ.

Նա քննությանն է յենթարկում բոլոր ապրանքները, ինչ է։

ԿԱՐԳԱԴՐԻՋ.

Վոչ, այնպես՝ մեկ-մեկ նայում է։

ԻՍԽԵԼ.

Լսիր, յերիտասարդ (Կարգադրիչի թեվից բռնելով քաշում է նրան մի անկյուն)։

ԿԱՐԳԱԴՐԻՋ.

(Բարձր ձայնով բեռնակիրներին) Հե՛յ, նավը գալիս է, դուրս յեկեք քարափ և ոգնեցեք։

(Բեռնակիրները դուրս են գնում)։

ԻՍԽԵԼ.

Լսիր, յերիտասարդ, յես քեզ չեմ ճանաչում, բայց այն ծերունուն, որի պաշտոնը դու ստացար, լավ եյի ճանաչում։ Դու տեսել ես Բեբեքում կառուցած նրա ապարանքը։ Այդ ապարանքը նա կառուցեց այստեղ աշխատելով և քեզ նման վողորմելի ռոճիկ ստանալով։ Հիմա իմացիր, թե նա ինչպես արավ։ Մի մտածիր, տեսնեմ։

ԿԱՐԳԱԴՐԻՋ.

(Ցերկար մտածելուց հետո) Այսպիսի ռոճիկով ապարանք չեր կարող շինել. յերևի մի հանք գտավ։

ԻՍԽԵԼ.

Մի հանք գտավ, ճիշտ է։ Նա մի հանք գտավ և ճարպիկ ձևով ոգտագործեց այն։ Հիմա մտածիր և ասա, թե գտածը ինչ հանք եր։

ԿԱՐԳԱԴՐԻՋ.

Ցերևի վոսկու հանք եր։

ԻՍԽԵԼ.

Ապրիս։ Նրա գտածը վոսկու հանք եր։ Ապա հիմա մտածիր և իմացիր, թե ուր գտավ այս վոսկու հանքը։

ԿԱՐԳԱԴՐԻՋ.

Մի տեղ գտած կլինի։

ԻՍԽԵԼ.

Լսիր, ուշի ուշով լսիր ինձ։ Ծերունին այդ վոսկու հանքը գտավ այս մաքսատան մեջ, դրսից ապրանք ստացողների ափերում։ (Ափը լիքը վոսկով յերկարում է կարգադրիչին) Տեսնում ես հանքը, յերիտասարդ, ալդեն գտել ես, շահագործիր։

ԿԱՐԳԱԴՐԻՋ.

(Հորս կողմը գննելով՝ առնում է վոսկիները)։

ԻՍԽԵԼ.

Իմ անունով միքանի արկղ ապրանք է գալիս. վրան գրված է՝ «Նուրը տեսակի մեխեր». առանց վերատեսչին ցույց տալու՝ ուղարկիր իմ տունը։ Ուղարկելուց հետո իմ ափում կգտնես և մի ուրիշ հանք, ավելի հարուստը։

ԿԱՐԳԱԴՐԻՋ.

Շատ լավ, շատ լավ։ Նավը հասնում է, հեռացիր այստեղից։

ԻՍԽԵԼ.

Շահագործիր մարդկանց ափերը։ Անհատակ են գրանք։ (Դուրս)։

Նավը կանգնում է մոտիկ քարափը, մաքսատան դռնից յերևվում է նավը։

ԿԱՐԳԱԴՐԻՋ.

(Փողերը գաղտնի համրելով նետում է գրպանը)։

ԻՍԽԵԼ.

(Ներս է վազում) Լսիր, յերիտասարդ. մաքսատան վերատեսուչը և յելևտից նազիրը կանգնած են քարափի վրա։ Նրանց ներկայությունը վտանգավոր է։

ԿԱՐԳԱԴՐԻՋ.

Վոչինչ, մի վախենա։

ԻՍԽԵԼ.

Յես փորձառու եմ, յերիտասարդ, վերատեսուչը՝ խորամանկ, նազիրը՝ անգութ, իսկ դու հանդուգն կերևիս։ Աղետավոր խառնուրդ է դա։

ԿԱՐԳԱԴՐԻՋ.

Կստանաս արկղները, մի վախենա, ասում եմ։ Հեռացիր այստեղից։

ԻՍԽԵԼ.

Սրտումս վախ ընկավ։ Զգուշ յեղիր։ (Ուզում է դուրս գնալ, բայց Հաջի Զելեբին յեվ Նազիրը ներս են մտնում։ Իսխելը խոնարհվելով բարևվում է)։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Իսխել եֆենդի, յերկար ժամանակ է ձեզ չեմ տեսել։

ԻՍԽԵԼ.

Որհնում եմ ձեր թանկագին կյանքը, Հաջի Զելեբի։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Մի վորևե գործի համար եք յեկել։ Պատրաստ եմ ծառայելու ձեզ։

ԻՍԽԵԼ.

(Թրքական խորը բարևով) Մաղթում եմ ձեզ յերկար կյանք։ Ցեկած եյի ձեզ տեսնելու և իմանալու ձեր առողջությունը։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Ապրում եմ Ալլահի կյանքով և շնորհով։

ԻՍԽԵԼ.

(Թրքական խորը բարևով՝ կռանում է)։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Պատրաստ եմ ձեզ ծառայելու իբրև հին բարեկամի։

ԻՍԽԵԼ.

Հավատում եմ ձեր անկեղծության և անկեղծ բարե-

կամության։ Մաքսատան հետ գործ չունենալով՝ յերկար ժամանակ է ձեզ տեսնելու յերջանկությունը չեմ վայելում։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Մինթե միայն առևտրական գործերով կարելի է հարաբերություն մշակել։

ԻՍԽԵԼ.

Խնայում եմ ձեր թանկագին ժամանակը, Հաջի Զելեբի, գիտեմ վոր պետական բարձր ծառայությունները խեղդում են ձեզ։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Յես միշտ ժամանակ կունենամ իմ բարեկամների համար։

ԻՍԽԵԼ.

(Թրքական խորը բարեվով) Վստահում եմ ձեր բարեկամության։ (Թրքական խորը բարեվով Նազիրին՝ հեռանում է։ Իսխելի հեռանալուց հետո Նազիրը յեվ Հաջի Զելեբին իրար աչքերի մեջ են նայում յերկար յեվ ապա սկսում են բարձր յեվ շնական հռհռալ)։

Ա. ԲԵՌՆԱԿԻՐ.

(Ներս մի հակով)։

ԿԱՐԳԱԴՐԻՉ.

Այստեղ, այստեղ։

Ա. ԲԵՌՆԱԿԻՐ.

(Զգում է հակը յեվ դուրս)։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

(Նազիրին) Այո, կարելի է և այդպես անել, դա ավելի թեթև կլինի արհեստավորների համար, իսկ պետական գանձը ավելի կշահի։

ՆԱԶԻՐ.

Յես այսոր իսկ կտանամ դրա համար սուլթանական հրամանը։ Յեթե սուլթանը հայտնե ձեզ այդ մասին՝ կասեք, իհարկե, վոր յես ձեզ հետ խորհրդակցել եմ։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Ճշմարտությունն ել այդպես է։

(Բեռնակիրները կամաց-կամաց նավի ապրանքները բերում են յեվ դարսում մաքսատան մեջ։ Դուրսը նավի վրա յեվ նավի առաջ բազմություն կա. Թոկերով ապրանքներն իջեցնում են վար, աղմուկով, հարա-հրոցներով։ Հաջի Զելեբին յեվ Նազիրը նստած աթոռների վրա՝ մաքսատան մեջտեղը, ուշի ուշով դիտում են ներս բերված ապրանքները)։

ԿԱՐԳԱԴՐԻՉ.

(Սկսում է ջղային զզալ իրեն, մոտենում է Հաջի Զելեբուն) Դրասենյակում շատ կարևոր գրություններ կան, տեր իմ, պետք է կարդացվեն։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Հետո։

ԿԱՐԳԱԴՐԻՉ.

Մի քանիսի վրա գրված է «շտապ», տեր իմ։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Վոչինչ։

ԿԱՐԳԱԴՐԻՉ.

Յերեկվա գրությունները դեռևս չեն ստորագրված։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

(Զայրացած) Շատ եք խոսում։

ԿԱՐԳԱԴՐԻՉ.

(Հեռանում է)։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

(Նազիրին) Իսխելը խոսած կլինի այս միտքին։

ՆԱԶԻՐ.

Յերևի։

ԿԱՐԳԱԴՐԻՉ.

(Ուզում է նավ գնալ)։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Սպասեցեք այստեղ, կարևոր է ձեր ներկայությունը այստեղ։

ԿԱՐԳԱԴՐԻՋ.

Նավի վրա գողություններ կարող են պատահել։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Նավի վրա հսկող դրել եմ յես։ Գողությունը այստեղ պետք է պատահի։ Սպասեցեք այստեղ։

ԿԱՐԳԱԴՐԻՋ.

(Մնում է աներևակայելի ջղային կացության մեջ)։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

(Մի բեռնակրի) Դեռևս ապրանք շատ կա։

ԲԵՌՆԱԿԻՐ.

Չեմ իմանում, տալիս են, հա տալիս են։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Ասացեք, վոր մի քիչ արագ շարժվեն։

ԲԵՌՆԱԿԻՐ.

Շատ բարի։

ՄԻ ՄԱՐԴ.

(Ներս մտնելով՝ կարգադրիչին) Մեկը ձեզ դուրսն ուզում է։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Ասացեք ինքը այստեղ գա։ Նա զբաղված է։

ԿԱՐԳԱԴՐԻՋ.

Տնից կանչած կլինեն, տեր իմ։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

(Առանց ուշադրություն դարձնելու կարգադրիչի խոսքերին —կանչողին) Ասացեք այստեղ գա։

ՄԱՐԴԸ.

(Դուրս)։

Բ. ԲԵՌՆԱԿԻՐ.

(Բերում է մի արկղ)։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Դիր այդ արկղը այստեղ։

Բ. ԲԵՌՆԱԿԻՐ.

(Դնելով արկղը ցած) Այս արկղներից մի քանի հատ կա։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Բերեք բոլորն այստեղ։

Բ. ԲԵՌՆԱԿԻՐ.

(Դուրս)։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

(Զննելով արկղը յեվ կարդալով մակագրությունը, Նազիրին) Դրանք են, տեր իմ։ Նախ հասցեագրված են Հալետ եֆենդիին, ապա փոխված է Իսխելի անվան։

ՆԱԶԻՐ.

Ուրեմն Հալեֆն ել խառն է գործի մեջ։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Նրանք յերկուսը մի մարդ են, տեր իմ։ (Բեռնակիրները բերում են հետզհետե մյուս արկղները՝ թվով յերեք յեվ դնում են Հաջի Զելեբու յեվ Նազիրի առաջ) Ել ապրանք կա։

Գ. ԲԵՌՆԱԿԻՐ.

Մի հակ ճաց, տեր իմ։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Շուտ արեք և վերջացրեք (Բեռնակիրները դուրս։ Նազիրին) Այնուամենայնիվ առանց արկղներից մեկն ու մեկը բանալու չեմք տանի։

ՆԱԶԻՐ.

Կարիք չկա։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Կարող է պատահել, վոր մեր իմաստությունն են փորձում, տեր իմ։

ՆԱԶԻՐ.

Հա՛, այդպե՞ս։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

Կարող ե պատահել, տեր իմ։

ՆԱԶԻՐ.

Բանալուց և ստուգելուց վո՛չ մի վնաս։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

Այո՛։

(Բեռնակիրները ներում են մի մեծ հակ յեվ դարսում են մաքսատան մեջ)։

Ա. ԲԵՌՆԱԿԻՐ.

Նավը դատարկվեց, տեր իմ։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

Շատ լավ։ (Կարգադրիչին) Փակեցեք մեծ դուռը։

ԿԱՐԳԱԴՐԻՉ.

(Փակում ե դուռը, դաղում ե աղմուկը յեվ ամբողջ մաքսատունը մթնում)։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

Մի մոմ վառեցեք։

ԿԱՐԳԱԴՐԻՉ.

(Վառում ե մոմը)։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

Բացեք այս արկղը։

Բ. ԲԵՌՆԱԿԻՐ.

(Աքցանը առնելով բաց ե անում մի արկղը)։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

Զգո՛ւշ, արկղը չկոտրես։ (Իր ձեռքովը խառնում ե մեջը յեվ դուրս ե բերում վոսկիները) Անավասիկ ոսմանյան կեղծ վոսկիներ, տեր իմ։

ՆԱԶԻՐ.

Տեսնում եմ։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

Փակեցեք արկղը, շալակեցեք և հետևեցեք մեզ։

Գ. ԲԵՌՆԱԿԻՐ.

(Մեխում ե արկղի կափարիչը)։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

(Կարգադրիչին) Դուք այստեղ մնացեք։ Վո՛չ մի ապրանք դուրս չտալ, մինչև իմ վերադարձը։ Լսո՞ւմ եք։

ԿԱՐԳԱԴՐԻՉ.

(Խոնարհվելով) Թե լսում եմ և թե հասկանում, տեր իմ։

ՆԱԶԻՐ.

(Վոտի ե կանգնում յեվ գնում ե դեպի մեծ դուռը)։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

Ա՛յս դռնից, տեր իմ։

(Հաջի Զելեբի, Նազիր յեվ բեռնակիրներ, արկղները շալակած գնում են դուրս աջ դռնով)։

ԿԱՐԳԱԴՐԻՉ.

(Մոմը ձեռքին կանգնած տեղում՝ մնում ե մեխված յեվ շվարած)։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

(Ցետ գալով) Ցես քեզ ազատեցի մի վտանգավոր արարքից։ պահիր վոսկիները մոտդ և ուրիշ առթիվ վոսկիները թող չշլացնեն քեզ այդպիսի վտանգավոր խոստումներ տալու։ Ցերիտասարդ ես և հանդուգն, բայց այդ բոլորը անարժեք և անուժ են իմաստության առաջ։ (Դուրս)։

ԿԱՐԳԱԴՐԻՉ.

(Ցերկար կանգնելուց հետո՝ փչում ե մոմը, գնում, բաց ե անում մաքսատան մեծ դուռը, լուսավորում ե մաքսատունը։ Նավը հեռացել ե քարափից, ցանցառ յերթեվեկ կա քարափի վրա)։

ՄԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ.

(Ներս մտնելով) Կարո՞ղ եմ իմ ապրանքը տանել իկուն ևեթ։

ԿԱՐԳԱԴՐԻՋ.

Վոչ։ Վերատեսուչը պետք է վերադառնա, ապա։

ՎԱՃԱՌԱԿԱՆ.

Ա՜յ քեզ բան։ Իսկ իմ ապրանքը ուշ ստանալուս և ճնաս կրելուս պատասխանատուն ով է լինելու։

ԿԱՐԳԱԴՐԻՋ.

Վոչ վոք։ Այսպես է վերատեսչի հրամանը։

ՎԱՃԱՌԱԿԱՆ.

Վերջապես պետք է հասկանալ խնդիրը։

ԿԱՐԳԱԴՐԻՋ.

Ուրիշ բաներ ունեմ մտածելու, ավելի կարևոր, քան քո գործը։ Հեռացիր այստեղից։

ՎԱՃԱՌԱԿԱՆ.

Մի նեղանաք։ Ասացեք խնդրեմ, յո՞ր է վերադառնալու վերատեսուչը. ուր է գնացել։

ԿԱՐԳԱԴՐԻՋ.

Չեմ իմանում։

ՎԱՃԱՌԱԿԱՆ.

(Դլուխը յերերցնելով՝ դուրս)։

ԿԱՐԳԱԴՐԻՋ.

(Յերթեվեկում է ջղային դրության մեջ)։

ԻՍԽԵԼ.

(Անապարանքով ներս) Ասացեք, ամեն ինչ ճիշտ ասացեք, միայն շուտ ասացեք. ինչ պատահեց, ուր մնացին արկղները։

ԿԱՐԳԱԴՐԻՋ.

Վերատեսուչը և նազիրը բռնեցին ապրանքները։

ԻՍԽԵԼ.

Աղետավոր է դա, մահվան չափ ծանր է այդ լուրը։ Կորած եմ, կորած եմ, կորած եմ։

ԿԱՐԳԱԴՐԻՋ.

Ուրիշ վոչ մի հնար չկար։ Նրանք իմանում էին արկղների գալու մասին։

ԻՍԽԵԼ.

Հատկապես դրա համար էին յեկել։

ԿԱՐԳԱԴՐԻՋ.

Այո, բացարձակապես դրա համար էին յեկել։

ԻՍԽԵԼ.

Բացին արկղները։

ԿԱՐԳԱԴՐԻՋ.

Միայն մեկը։

ԻՍԽԵԼ.

Ի՞նչ գտան մեջը։

ԿԱՐԳԱԴՐԻՋ.

Այն, ինչ դուք անակնկալում էիք։

ԻՍԽԵԼ.

Վոսկի՞, այո՞։

ԿԱՐԳԱԴՐԻՋ.

Կեղծ վոսկիներ։

ԻՍԽԵԼ.

Յեթե յես վատահ չլինեյի քո վրա, յերիտասարդ, տարբեր միջոցներ կձեռնարկեյի։

ԿԱՐԳԱԴՐԻՋ.

Վոչ մի տարբեր միջոց չկար։ Նրանք իմացել էին արկղների գալու մասին գալուց առաջ. նրանք հսկիչ էին նշանակել նավի վրա, իսկ իրենք էլ ներս յեկան, քննեցին բոլոր ապրանքները և բռնեցին քո արկղները։

ԻՍԽԵԼ.

Դու հիմար ես։ Կկաշառեյի նավապետին, և առանց արկղները դուրս հանելու նավից՝ յետ կտաներ։

ԿԱՐԳԱԴՐԻՉ.

Դա կարելի ե՞ր։ (Լռություն) Իսկապես վո՞ր դա կարելի ե՞ր։

ԻՍԽԵԼ.

Քո մոտ մարդ ուղարկեցի, վոր դուրս գայիր, ինչու՞ չեկար։

ԿԱՐԳԱԴՐԻՉ.

Վերատեսուչը արգելեց ինձ դուրս գալ մաքսատնից։

ԻՍԽԵԼ.

Ասացեք խնդրեմ, ո՞ւր տարան արկղները։

ԿԱՐԳԱԴՐԻՉ.

Այդ մասին վոչինչ չգիտեմ։

ԻՍԽԵԼ.

(Զայրացած) Կաշառակերությունն ել իր առաքինի և բարոյական կողմերն ունի, բարեկամս, ինձանից կաշառք ես կերել և պարտավոր ես գեթ մի քիչ որենքից և պաշտոնյաներից դուրս գալու առաքինությունն ունենալ։ Ո՞ւր տարան իմ արկղները։

ԿԱՐԳԱԴՐԻՉ.

Ճշմարիտ եմ ասում։ Վոչինչ չգիտեմ։

ԻՍԽԵԼ.

(Աչքերը շոռմ է կիսախելագար վիճակում յեվ հանկարծ բղավում է) Ա՜, ապրում եմ իմ վերջին որը, ապրում եմ իմ վերջին բոպեները (Վազում է դուրս)։

ՎԱՐԱԳՈՒՑԸ

VII ՊԱՏԿԵՐ

Դահլիճ սուլթանական սարայում։

ՄԻ ԾԵՐՈՒՆԻ ՆԵՐՔԻՆԻ.

(Մի ուրիշ յերիտասարդ Ներքինու) Այսպես ե կայսրության գործը, թագավորը չի իմանում թե ինչ ե կատարվում տերության ներքին կյանքում։ Լսում ե ուրիշներից, անում ե ուրիշների ձեռքով։

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՆԵՐՔԻՆԻ.

Փաշաներն ու վեզիրներն ասում են, վոր թագավորը պատանի յեղած ժամանակ շատ իմաստուն ե յեղել։

ԾԵՐՈՒՆԻ ՆԵՐՔԻՆԻ.

Վեզիրներն ու փաշաները պակում ելին նրա պատանեկական թարմ ծաղիկները և հեքիաթներ ելին հյուսում նրա իմաստության շուրջը։ Այս հեքիաթները հիմա իրականություն են դառել (Հեգնական ծիծաղ)։

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՆԵՐՔԻՆԻ.

Աշխարհի մասին շատ բան գիտես, ծերունի։

ԾԵՐՈՒՆԻ ՆԵՐՔԻՆԻ.

Աշխարհի մասին մի բան անհրաժեշտ ե գիտենալ, Ճշացածը հեշտ ե.—պետք ե գիտենալ, վոր աշխարհը կանգնած ե շողոքորթության, սուտի և փառասիրության սյուների վրա. այս իմանալուց հետո՝ ամեն բան կիմանաս և ամեն գործում կլինես իմաստուն և հաղթական։ Պետք ե շողոքորթես իշխանավորներին, պետք ե ստես ընկերոջդ և սողոսկես ավելի և ավելի բարձր գիրքեր։ Փողոցային հասարակ և ագետ մարդիկ այժմ նազիր և վեզիր են մեր Սարայում այս յերեք առաքինություններով։ Մեր յերկրորդ սենեկապետը հինգ տարի առաջ Ղալաթիայում պոռնկանոցի տեր եր, սողոսկեց մինչև արքունիքի դռները և դու կտեսնես, վոր մի որ նազիրներից մեկը կանհետանա և սենեկապետը կդառնա նազիր։

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՆԵՐՔԻՆԻ.

Զարմանալի է, վոր այդ իմաստությամբ դեռևս ծառա ես արքունիքում։

ԾԵՐՈՒՆԻ ՆԵՐՔԻՆԻ.

Մենք սեամորթ ենք, տղա՛, այս բոլորը սպիտակամորթների համար է։ Մեր պաշտոնը պետք է լինի ծառայել մեր ազուշ թագավորին և ապրել ինչքան սատանան է կամենում։ Սեամորթ... դա արդեն ինքնին բնական անեծք է։ Սեամորթը այն յերեք առաքինություններից բացի, պետք ունենա և մի ուրիշ առաքինություն—դավաղրել, իսկ դավաղրելը կլինի միայն այն ժամանակ, յերբ բոլոր սեամորթները միանան։ Այդ միությունը չկա։ Մեկ-մեկ ուզում եմ խեղդել թագավորին և մի քանի նազիրներին, տապալել գահը, բայց, թեկուզ սպիտակամորթ, մի հոգով վոչ մի բան ձեռք չի բերվի։ Բաժանել են մեր ցեղի մի մասը զանազան յերկրներում, իսկ մնացածն էլ ապրում է Աֆրիկայում կիզիչ անապատներում։ Ո՜հ, այնպես ցանկանում եմ դավաղրել։

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՆԵՐՔԻՆԻ.

Թագավորը, թագավորը...

ԾԵՐՈՒՆԻ ՆԵՐՔԻՆԻ.

Աղոթենք մեր թագավորի արևշատության համար։

(Ցերկուսն էլ խոնարհվում են)։

Մտնում են Սուլթանը յեվ արքունի Արարողապետը։

ՍՈՒԼԹԱՆ.

Ի՞նչ լուր այսոր իմ կայսրության մայրաքաղաքի կյանքից։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Մի խումբ հարբած մարդիկ աղմկելով անցել են այս առավոտ Սարայի առջևից, բարեբախտաբար ոգոստափառը քնած եր ծովահայաց ննջարանում։ Ձերբակալված են աղմկողները։

ՍՈՒԼԹԱՆ.

Հրամայում եմ, վոր աղմկողները խկուլն ևեթ գլխատվեն։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Կկատարվի, տեր իմ (Խոնարհվում է)։

ՍՈՒԼԹԱՆ.

Ապա կարգադրիր, արարողապետ, վոր ձկնորսները առավոտները աղմուկ չբարձրացնեն ծովում, Սարայի լուսամուտների տակ։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Հրամայեցեք և կկատարվի խկուլն, ոգոստափառ։

(Լռություն)։

ՍՈՒԼԹԱՆ.

Այսոր ինչ որ է։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Կիրակի է, տեր իմ։

ՍՈՒԼԹԱՆ.

Ձեմ սիրում յես կիրակի որը։ Կիրակի որերը յես անպայման ձլաս եմ հասցնում մի իսլամի։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Թող համբերատար լինի խանը զազին և իսլամների խալիֆան։

ՍՈՒԼԹԱՆ.

Պիղծ և անպիտան որ է կիրակին։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Քավ լիցի, վոր մի վորևե իսլամ մտածի, թե խալիֆան հանցավոր կարող է լինել, բայց պետք է հաղթել, ոգոստափառ, չար որվա չար բերուքներին։

ՍՈՒԼԹԱՆ.

Մարգարեյի անունով յերդվում եմ, վոր չեմ խնայի և ամենահավատացյալ իսլամին, յեթե նա գործել է իմ կայսրության շահերի դեմ։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Իսլամը միայն փոքրիկ սխալներ կարող է գործել, հանցանք—յերբեք։

ՍՈՒԼԹԱՆ.

Լսիր։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Լսում է մի քաջ մի քաջ սարուկը, խանը զգի։

ՍՈՒԼԹԱՆ.

Քո լեզուն շատ է բլբլում։ Կկարեմ։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Ինչպես վոր իմ տիրոջ կամքը ցանկանա իր սարուկի համար (Խոնարհվում է։ Լռություն)։

ՍՈՒԼԹԱՆ.

Գտիր ինձ համար մի վրացի հարճ։ Դուր են գալիս ինձ այդ սևաչյա վրացուհիները։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Պատրաստ է նա մարգարեյի հաջորդի համար։

ՍՈՒԼԹԱՆ.

Այսոր հեթ։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Պատրաստ է, տեր իմ։

ՍՈՒԼԹԱՆ.

Ձեմ ցանկանում կամազուրկներին։ Կամազուրկները ինձ ձանձրացնում են։ Ուզում եմ դժվարահաճներին, հասկանում ես։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Լսում է արքայի սարուկը և կկատարի նրա փոքրագույն կամքը (Լռություն)։

ՍՈՒԼԹԱՆ.

Ի՞նչ լուրեր են պատվում Թագաժառանգի հիվանդության մասին։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Աղոթում է ժողովուրդը նրա յերկարակեցության համար։

ՍՈՒԼԹԱՆ.

Թագաժառանգի հիվանդության առթիվ մորթել տուր 500 վոչխար և բաժանել տուր աղքատներին, առանց կրոնի և ցեղի խտրության, 5000 ոխա հացով։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Կկատարվի փադիշահի հրամանը։ Բայց թող նրի փադիշահը իր ամենախոնարհ սարուկին, անհավատները իսլամի մատաղը չեն ուտի։

ՍՈՒԼԹԱՆ.

Ուտեն կամ չուտեն՝ մեկ է, բաժանել տուր, առանց ցեղի ու կրոնի խտրության։

ԱՐԱՐՈՂԱՊԵՏ.

Կկատարվի փադիշահի հրամանը։

Ա. ՍԵՆԵԿԱՊԵՏ.

(Ներս մտնելով) Յելևմտից նազիրը և մաքսատան վերատեսուչը խնդրում են նորին ոգոստափառ սուլթանից ունկնդրություն կայսերական շատ կարևոր և անհետաձգելի գործի համար։

ՍՈՒԼԹԱՆ.

Յելևմտից նազիրը և մաքսատան վերատեսուչը։

Ա. ՍԵՆԵԿԱՊԵՏ.

Այո, փադիշահ, յելևմտից նազիրը և մաքսատան վերատեսուչը։

ՍՈՒԼԹԱՆ.

Յերևի մի մաքսանենգություն կա։ Հը՞, կատաղում եմ յես մաքսանենգների դեմ։ Ասեցին, թե ինչու համար են ունկնդրություն խնդրում։

Ա. ՍԵՆԵԿԱՊԵՏ.

Վոչ, փադիշահ, ասեցին՝ կայսրության շատ կարևոր գործի համար։

ՍՈՒԼԹԱՆ.

Հրամայում եմ նրանց իմ ներկայության։

Ա. ՍԵՆԵԿԱՊԵՏ.

(Դուրս)։

ՍՈՒԼԹԱՆ.

Արաբողապետ, կատարիր իմ պատվերները։

ԱՐԱԲՈՂԱՊԵՏ.

(Խոնարհվելով քաշվում է դուրս)։

Ներս են մտնում յելեվմտից Նազիր, Հաջի Զելեբի յեվ յերեք խափշիկ ներքինիներ արկղներ շալակած։

ՍՈՒԼԹԱՆ.

Նվերներ եք բերել և ասում եք, կայսրության շատ կարևոր գործով ունկնդրություն եք խնդրում։

ՆԱԶԻՐ.

Յերանի թե նվերների համար մենք անհանգստություն ցանկանայինք պատճառել նորին կայսերական վեհափառության։

ՍՈՒԼԹԱՆ.

Ապա ի՞նչ արկղներ են սրանք։

ՆԱԶԻՐ.

Ոսմանյան կեղծ վոսկիներ՝ կտրված արտասահմանում և բերված այստեղ այսորվա նավով։

ՍՈՒԼԹԱՆ.

Յերեք արկղ վոսկի և կեղծ։

ՆԱԶԻՐ.

Այո, տեր իմ։

ՍՈՒԼԹԱՆ.

Ո՜հ, զայրացնում են ինձ այս յեվրոպացիները։ Կամաց-կամաց նրանք իրենց քթերը խոթում են և մեր գանձի մեջ։ Պետք է արգելել յեվրոպացիների մուտքը ոսմանյան կայսրության բոլոր սահմանների վրա։

ՆԱԶԻՐ.

Յեվրոպացիներ չեն դժբախտաբար։

ՍՈՒԼԹԱՆ.

Ապա։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Յեվրոպացիների համար արքայի սուրը կարուկ է, ոգեստափոր, մեր յերկրի հավատարիմներն են նորին վեհափառության կայսրության դավաճանները։

ՍՈՒԼԹԱՆ.

Զեմ հասկանում։ Ուզում եք ասել, որ իմ կայսրության հպատակներն են արել այս բանը։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Դժբախտաբար այո, փադիշահ։

ՍՈՒԼԹԱՆ.

Ո՞վքեր են այդ սրիկաները։

ՆԱԶԻՐ.

Ոսմանյան կառավարության հավատարիմ ծառաները։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

(Սկսում է արկղները քանալ) Բանանք արկղները և թող իր աչքովը տեսնի ոսմանյան կայսրության վեհապետը։ (Բաց է անում արկղները)։

ՍՈՒԼԹԱՆ.

(Կեղծ վոսկիները տեսնելուց հետո) Ովքե՞ր են այս սրիկաները, ասացեք։

ՆԱԶԻՐ.

Յերկու հոգի են, ոգեստափոր, մեկը՝ իտալ, մյուսը՝ անհավատ։

ՍՈՒԼԹԱՆ.

Վերջապես ովքե՞ր են։

ՆԱԶԻՐ.

Հալետ Եֆենդին և Իսխելը։

ՍՈՒԼԹԱՆ.

(Կատաղությունից յերթեվեկում է)։

ՆԱԶԻՐ.

Յերկուսն ել հավասար հանցավորներ, տեր իմ։

ՍՈՒԼԹԱՆ.

Ի՞նչպես եք հաստատում, վոր նրանք են։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

Պոստատանը բռնված եր մի նամակ Հալեսի ստորագրությամբ, վորի մեջ գրում է Հալեսը արտասահման՝ ուղարկել վոսկիներ վոչ թե իր անունով, այլ Իսխելի անունով։ Այսորվա նավից դուրս բերված ապրանքների մեջ նազիրի հետ միասին բռնեցինք այս արկղները և, ինչպես տեսնում եք, նախ գրված է Հալեսի անունով և ապա փոխված է Իսխելի անվան։ Վոսկիները կտրված են Վիեննայում։ Հալեսի նամակի պոստատան նազիրի ձեռքով վավերացված պատճենը կա։ Ահավասիկ, ոգոստափառ, այդ նամակը, կարող եք տեսնել անձամբ (Նամակը յերկարում է Սուլթանին)։

ՍՈՒԼԹԱՆ.

(Նամակը խլելով արագ կարդում է յեվ ծռում գետին) Հավատում եմ այս սրիկայության։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

(Առնում է գետնից նամակը յեվ դնում է ծոցը)։

ՍՈՒԼԹԱՆ.

(Ներքինուն) Կանչիր այստեղ առաջին սենեկապետին։

ՆԵՐԲԻՆԻ.

(Խոնարհվելով քաշվում է դուրս)։

ՍՈՒԼԹԱՆ.

Պիտի պատժել այս դավաճաններին։

ՆԱԶԻՐ.

Պիտի պատժել, տեր իմ։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

Համաձայն ոսմանյան արդարության։

(Մտնում են Ա. Սենեկապետը յեվ Ներքինին)։

Ա. ՍԵՆԵԿԱՊԵՏ.

Թող հրատայի փաղիշահը։

ՍՈՒԼԹԱՆ.

Կանչիր այստեղ մեծ վեզիրին։

Ա. ՍԵՆԵԿԱՊԵՏ.

(Խոնարհվելով քաշվում է)։

ՍՈՒԼԹԱՆ.

Այս մաքսանենգներից ով է ամենածանր հանցավորը, նազիրը։

ՆԱԶԻՐ.

Հավասար հանցավոր են յերկուսն ել, փաղիշահ։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

Անհերելի հանցավորներ։

ՍՈՒԼԹԱՆ.

Կպատժեմ յերկուսին ել։ Մաքսանենգներ գոյություն չպետք է ունենան իմ կայսրության մեջ։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

Զարմանալի է, վոր հավատացյալները միշտ մի անհավատ բարեկամ կունենան մաքսանենգության գործում։ (Մի պահ լռությունից հետո) Դրանից է, վոր անհավատները քաջալերվում են հավատացյալներից պետական խարդախության մեջ։

ՆԱԶԻՐ.

Խարդախության մեջ հավատացյալները անճարակ են։

ՀԱԶԻ ԶԵԼԵԲԻ.

Ինձ թվում է։

ՍՈՒԼԹԱՆ.

Խաբվող հավատացյալը ավելի հանցավոր է։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

Դժվար է, վեհափառ տեր, վորոշել չափերը։

ՆԱԶԻՐ.

Մեկը լրացնում է մյուսը։

ՍՈՒԼԹԱՆ.

Յերկուսն էլ հանցավորներ են։ Կպատժեմ յերկուսին էլ,—գերագույն պատիժը, վոր մարդկային արարածին կարող եմ հասցնել։

ՆԱԶԻՐ.

Մահվա՞ն պատիժ, տեր իմ։

ՍՈՒԼԹԱՆ.

Միթե չհասկացա՞ք իմ միտքը։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

(Շփում է միրուքը յեվ խորը ժպտում)։

ՆԵՐԲԻՆԻ.

Մեծ վեզիրը (Բաց է անում վարագույրը)։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

(Ներս մտնելով) Հույս ունեմ, փադիշահ, այսպես աճապարանքով վոր կանչել եք, մի մեծ ուրախության համար կլինի։

ՍՈՒԼԹԱՆ.

Այո՛, պիտի վայելես մի մեծ և դաժան ուրախություն։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

(Դժգոհում է)։

ՍՈՒԼԹԱՆ.

Մեծ վիշտ է կայսրության դեմ դավաճաններ գտնելը, բայց գտնելուց հետո նրանց պատժելը ուրախություն է, մեծ վեզիր։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Միթե նորին վեհափառության կայսրության դեմ

դավաճաններ կան (Նայում է Հաջի Զելեբուն, կարծելով, վոր խնդիրը դառնում է նրա շուրջը)։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

(Խորը ժպտում է)։

ՍՈՒԼԹԱՆ.

Այո՛, կան, զզվելի դավաճաններ։ Տես այդ արկղները։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

(Քննելով արկղները) Ոսկանյան կեղծ վոսկիներ։ Մայրաքաղաքումն են կարված արդյոք։

ՆԱԶԻՐ.

Արտասահմանում։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Այստեղ հասած է ուրեմն մաքսատան միջոցով (Նրի նայում է Հաջի Զելեբուն՝ հաստատ համոզված լինելով, վոր Հաջի Զելեբին է ընված այդ գործում) Միայն անհավատները կարող են այսպիսի խորամանկություն փորձել, տեր իմ։

ՀԱՋԻ ԶԵԼԵԲԻ.

(Շփելով միրուքը՝ խորը ժպտում է)։

ՍՈՒԼԹԱՆ.

Կան և անհավատ իսլամներ։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Պիտի խստիվ պատժել։

ՍՈՒԼԹԱՆ.

Մահվան պատիժ եմ սահմանում։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

(Նայելով Հաջի Զելեբուն) Թող կարուկ լինի սուլթանի խոսքը և սուրը։

ՍՈՒԼԹԱՆ.

Բայց անհավատի հետ խառն է և մի հավատացյալ։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Թող խալիֆան ների հավատացյալին։

ՍՈՒԼԹԱՆ.

Վո՛չ։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Փադիշահ...

ՍՈՒԼԹԱՆ.

Կարգադրիր, որ անմիջապես ձերբակալեն Հալեմին ու Իսխելին և բերեն պալատ։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Փադիշահ...

ՍՈՒԼԹԱՆ.

Վո՛չ մի ավելորդ խոսք։ Կարգադրիր նաև, որ ամբողջ ավագանին ներկայանա պալատ։ Աճապարիր։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

(Խոնարհվելով քաշվում է դուրս)։

ՍՈՒԼԹԱՆ.

Սրիկանե՛ր։ (Ներքինուն) Կանչիր այստեղ սենեկապետին։

ՆԵՐՔԻՆԻ.

(Խոնարհվելով քաշվում է դուրս)։

ՍԵՆԵԿԱՊԵՏ.

(Ներս)։

ՍՈՒԼԹԱՆ.

Ուղարկիր այս արկղները արքունի փողերանոց։

ՍԵՆԵԿԱՊԵՏ.

(Դուրս յելվ անմիջապես ներս։ Նրա հետ մտնում են յերեք ներքինիներ յելվ տանում են արկղները։ Սենեկապետն ել դուրս)։

ՍՈՒԼԹԱՆ.

Շտապ պետք է կատարվեն այս բոլորը, որպեսզի կատաղությունս հագենա։

ՆԱԶԻՐ.

Հանգստացեք, խանը զազի, ամեն ինչ կկատարվի ձեր կամքի և հաճույքի համաձայն։

ՍՈՒԼԹԱՆ.

Ցանկանում եմ, որ շուտ կատարվի։

ՆԱԶԻՐ.

Այնքան շուտ, որքան ժարդը կարող է։

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ.

(Խոնարհվելով) Թող թույլ տա ինձ իմ թագավորը հեռանալու պալատից։

ՍՈՒԼԹԱՆ.

Վո՛չ, դու պետք է մնաս այստեղ և տեսնես քո հավատարմության պտուղը։

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ.

Թող ների ինձ կայսրը, իմ հոգին տկար է արյուն տեսնելու համար։

ՍՈՒԼԹԱՆ.

Մի՛ միջամտի, չեմ կարող պատիժը մեղմացնել։

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ.

Քավ լիցի, տեր իմ, որ յես միջամտեմ կայսեր և կայսրության գործերին, միայն խնայեցեք ինձ արյան տեսարանը։

ՍՈՒԼԹԱՆ.

Կայսրության ծառան պետք է տոկա արդարության համար գործված վոճիրին։

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ.

Թող ների ինձ իմ կայսրը։

ՍՈՒԼԹԱՆ.

Մնացի՛ր այստեղ։

ՀԱԶԻ ՉԵԼԵԲԻ.

(Քաշվում է մի կողմ յելվ միրուքը շփելով արտահայտում է անհուն բավականություն)։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

(Ներս) Մի քանի բոպեյից այստեղ կլինեն ձերբակալվածները։

ՍՈՒԼԹԱՆ.

Ասացեք՝ կայսրության դավաճանները։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Կայսրության դավաճանները, տեր իմ։

ՍԵՆԵԿԱՊԵՏ.

(Ներս) Ամբողջ ավազանին այս բոպեյիս կլինի փաղիշահի ներկայության։

ՍՈՒԼԹԱՆ.

Ի՞նչ վիճակի մեջ է պալատը։

ՍԵՆԵԿԱՊԵՏ.

Կես գիշերվա խոր և խաղաղ քնի մեջ է, տեր արքա։

ՍՈՒԼԹԱՆ.

Հոկիր, վոր ազմուկ չբարձրանա և չխռովի պալատի անդորրությունը։

ՍԵՆԵԿԱՊԵՏ.

(Խոնարհվելով քաշվում է դուրս)։

ՍՈՒԼԹԱՆ.

Ի՞նչ վիճակի մեջ է մայրաքաղաքը։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Խաղաղություն և հանգստություն, տեր արքա։

ՍՈՒԼԹԱՆ.

Կես գիշերին միայն յես եմ անհանգիստ այս դավաճանների ձեռքում։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Ծանը է կայսրության բեռը, խանը դազի։

ՍԵՆԵԿԱՊԵՏ.

(Բանալով վարագույրը) Ավազանին, փադիշահ։

Ներս են մտնում նազիրները յեվ պալատականներ,

խոնարհվում են յեվ տեսնելով Սուլթանին զազազած վիճակի մեջ՝ սկսում են ինչ-վոր փսփսալ։

ՍՈՒԼԹԱՆ.

Ո՞ւր են հանցավորները. մեծ վեզիր, յեթե փախչեն։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Շուտով կլինեն նորին վեհափառության ներկայության։

ՍՈՒԼԹԱՆ.

Շուտ, կատաղությունս կարող է ավելի աղետավոր դառնալ իմ կայսրության համար։

ՆԱԶԻՐ.

Համբերեցեք, վեհապետ։

ՍԵՆԵԿԱՊԵՏ.

(Ներս) Կալանավորները, տեր արքա։

Մտնում են Հալետ յեվ Իսխել։

ԻՍԽԵԼ.

(Ներս մտնելուն պես՝ փովում է Սուլթանի վոտները) Իմ անունը միայն գործածված է, յես վոչ մի բաժին և շահ չունեմ վոսկիների մեջ։

ՍՈՒԼԹԱՆ.

Հեռացրեք պետության այս դավաճանին իմ վոտներից։ Ոձի պես է փաթաթվում։

ԻՍԽԵԼ.

Գթացեք, ողորմածիս։

ՀԱԼԵՏ.

(Բոլորովին լուռ և յեվ արհամարհական)։

ՍՈՒԼԹԱՆ.

Սրանք դավաճանել են իմ կայսրության դեմ, ստար յերկրներից փոխադրելով ոսմանյան կեղծ վոսկիներ։ Սենեկապետ, կանչիր արքունի դահճապետին։

ՍԵՆԵԿԱՊԵՏ.

(Խոնարհվելով քաշվում է)։

ՍՈՒԼԹԱՆ.

Յեռ իմանում եյի, վոր անհավատները կարող եյին դավաճանել, բայց չեյի իմանում, վոր նրանց աջակից կարող է լինել և մի իսլամ։ Կպատժեմ յեռ այս դավաճաններին։

(Ավազանին հուզվում է)։

ԻՍԽԵԼ.

Գթացեք ինձ։

(Ներս է մտնում դահճապետը, մի անուելի բեղով յեվ վոսկրոտ մարդ, դանակներով զինված յեվ մի դանակ էլ խաչած առաջի ատամներով)։

ԴԱՀՃԱՊԵՏ.

(Սուրով բարեվում է) Կարուկ է խանը դազիի սուրը։

ՍՈՒԼԹԱՆ.

Իսկույն ևեթ կարիը կայսրության այդ դավաճանների գլուխները։

ԴԱՀՃԱՊԵՏ.

(Անգութ համարձակությամբ բռնում է Հալետի յեվ Խախլի վզակոթերից յեվ հրում է դեպի դուրս)։

ԻՍԽԵԼ.

(Դնալիս) Յեհովա, Յեհովա, Յեհովա...

(Ավազանին հուզվում է ու շփոթվում)։

ՍՈՒԼԹԱՆ.

Գիշերվա վոր ժամն է։

ՄԵԾ ՎԵԶԻՐ.

Կես գիշերը վաղուց անցել է տեր, արքա։

ՍՈՒԼԹԱՆ.

Վողջ աշխարհը վաղուց քնած է, իսկ այս սրիկաները վրդովում են իմ գիշերը։ Արարողապետ, ննջարան ուղարկիր վրացուհուն։ Գնանք։ (Գնում է, նրա յետեվից մեկ-մեկ գնում են, Մեծ Վեզիրից սկսած, բոլորը)։

ՀԱՋԻ ՉԵԼԵԲԻ.

(Մնում է մենակ, կոնգնում դահլիճի մեջտեղում, շփում է միրուքը յեվ ցինիկորեն հռհռում)։

ՀՍՍՀ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ԱՆՎԱՆ
7/XI—1922

ԹՈԹՈՎԵՆՑԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՍՐԻՆԴ (բանաստեղծություններ) 1908 թ. Կ. Պոլիս.
2. ՎՈՂԲ ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ (բանաստեղծություններ) 1916 թ. Թիֆլիս.
3. ԴԱՐՈՒՆԻՆ ՍԻՐՏԸ (դրամա) 1921 թ. Բոստոն.
4. ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ (Ա. շարք) 1921 թ. Բոստոն.
5. ԱՐԵՎԵԼՔ (բանաստեղծություն) 1917 թ. Թիֆլիս և 1922 թ. Կ. Պոլիս.
6. ՏՈՆՈՆ (վեպ) 1922 թ. Կ. Պոլիս.
7. ՓՈԹՈՐԿԻՆ ՄԵԶ (վեպ) 1922 թ. Կ. Պոլիս.
8. ԱՆԳԼԻԱ, ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ՅԵՎ ՅԵՍ (ճանապարհի նոթեր) 1922 թ. Կ. Պոլիս.
9. ՀԱԶԻ ՄԱՐԿՈՍ ԱՂԱ (վեպ) 1922 թ. Կ. Պոլիս.
10. ՄԱՀՎԱՆ ԲԱՏԱԼԻՈՆ (կոմեդիա) 1923 թ. Երևան.
11. ԴՈԿՏՈՐ ԲՈՒՐԲՈՆՅԱՆ (վեպ) 1923 թ. Երևան.
12. ՍԵՂԲՈՍԸ (սատիրա) 1925 թ. Երևան.
13. ՊՈՂՊԱՏԻՊՃԱՇ (դրամա) 1925 թ. Երևան.
14. ԻՄ ՀՈՐԱՔՈՒՅՐԸ (վեպ) 1925 թ. Երևան.
15. ՍԱՄՄԱ ԾՌԵՐ (դրամա) 1925 թ. Երևան.
16. ՆՈՐ ԲՅՈՒԶԱՆԴԻՈՆ (դրամա) 1925 թ. Երևան.

ԳԻՆԸ 1 Ռ.

ՀՈԿ. Ի ԳՐԱԴԱՐԱՆ № 1

ՀՀ Ազգային գրադարան
NL0339887

31388